

## ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՅԻՍԸ

Արարիչ Աստված հային շնորհել է կռվելու ու սխրանքի անօրինակ հատկությունը՝ մաքառել, հերոսանալ, երբ թշնամին սպառնում է մեր գոյությանը, և անպայման հաղթել, զի մեր կռիվը հանուն լինելիության է:



Ճակատագրի բերումով մայիսը դարձավ մեր հաղթանակների, մեր ապրելու իրավունքի, մեր անանց հպարտության, բերկրանքի, մեր փառապանծ գոյամարտերի, հաղթելու կամքի առնվազնային: Սենք ուզում ենք մեր մայիսյան հաղթանակների փառաբանումը սկսել ամենավերջից՝ 1992 թվականի մայիսի 8-ից, երբ հայկական ուժերը գրավեցին Շուշին: Հաղթանակը Արցախյան ազատամարտում հիշարժան էր, պատմական ու խորհրդանշական. չէ՞ որ հայ ազատամարտիկները այդ սխրանքով վերահաստատեցին հայ զինվորի հաղթելու անկոտրուկ ոգին: Ամենախորհրդանշականը, պատմականը այդ գոտեմարտում եղավ մի իրողություն, որ հարյուրամյակներ շարունակ ճակատագիրը մեզ զրկել էր. հայը թշնամուց խլեց, իրեն վերադարձրեց կորցրած մեծ հայրենիքի մի կտորը: Հիրավի պատմական իրողություն:

Իսկ հիմա անդրադարձ մեր մայիսյան սխրանքների սկզբին. այն 451-ին էր, Ավարայրի դաշտում, երբ իրար բախվեցին պարսկական 300-հազարանոց բանակը և 60-հազարանոց հայկական ուժերը: Մեր պատմության մեջ այն Վարդանանց պատերազմի օրն էր, մեր անկարելի սխրանքի, անհուսալի կռվի ու «Մահ իմացեալի» համազգային հաղթանակի օրը: Ասում են, որ Ավարայրի ճակատամարտից հետո, հայերին հավատուրաց լինելու պարտադրող պարսից Հազկերտ արքան ասել է՝ «Հայեր, կռվո՞ւմ եք, ապրեցե՞ք»: Ահա սրա համար է, որ մենք հպարտանում ենք՝ Ավարայրը համարելով մեր ժողովրդի, հայի բազկի հաղթանակի ճակատամարտ:

Մայիսյան մեր հաջորդ հաղթանակը 1918 թվականի մայիսին էր: Հայոց եղեռն իրագործած, հային հայրենիքից զրկած մարդակուլ օսմանը արշավեց իր հողի մի պատառիկի վրա ծվարած Հայաստան կոչվող երկրի վրա՝ իրագործելու իր մարդակուլ ծրագիրը՝ աշխարհի երեսից վերացնելու հայ ցեղն ու հայ ամունը: Ինչպես և 451-ին, թշնամին հզոր էր ու բազմաքանակ: Իրար հետևից հեշտությամբ գրավելով հայկական քաղաքները՝ թուրքական խորշակը հասավ Սարդարապատ կայարան: Մինչև Երևան մնում էր մի քանի ժամվա ճանապարհ: Ոչնչացման, անհետացման օրհասը կախվեց մեր թշնամու երկրի վերջին պատառիկի վրա:

Ուժերն անհավասար էին, հույսը մեռնում էր: Սակայն, ինչպես և Ավարայրում, բռնկեցվեց հայ ժողովուրդը և հիշեց՝ «Հայեր, կռվո՞ւմ եք, ապրեցե՞ք»: «Մահ իմացեալի» ոգին էր թևածում Սարդարապատի, Ապարանի, Ղարաբաղի ճակատներում:

Բոլոր ճակատներում հայերը պարտության մատնեցին թուրքական զեռակշիռ ուժերին, որոնք խուճապահար փախուստի դիմեցին: Փառավոր հաղթանակ, որից չօգտվեցին Հայաստանի Ազգային խորհրդի ապիկարները:

...Եվ կրկին մայիս, երբ աշխարհին տիրելու նկրտումներով մի խելագար, որ ֆաշիզմ էր խորհրդանշում, 1945-ի մայիսի 9-ին ծնկի եկավ հակահիտլերյան կռաւիցիայի առջև: Մարդկության պատմության այդ ամենաարյունալի, ամենադաժան ու ամենախաղեպ պատերազմի գլխավոր ծանրությունն ընկավ խորհրդային Միության ուսերին, երկիր, որի մի փոքրիկ և հպարտ մասն էինք մենք՝ հայերս: Այո՛, Մեծ հայրենականը մահ հայի պատերազմն էր: Պատերազմ այն թշնամու դեմ, որ ակտիվ մեղսակիցն էր Հայոց մեծ եղեռնի, որի դաշնակիցն էր մեր դարավոր թշնամի թուրքը, և որի արյունաբերու հրոսակները սահմանի վրա սպասում էին Ստալինգրադի անկմանը, որ մտնեին Հայաստան և ի վերջո իրականացնեին իրենց դարավոր ճիվաղային ծրագիրը՝ մորթեին, ոչնչացնեին վերջին հային:

Մենք կռվում էինք մեր դարավոր թշնամու դեմ, մենք վրեժ էինք լուծում մույն թուրքից, որը բնաջնջեց միլիոնավոր անմեղ մարդկանց: Եվ ես համոզված եմ՝ Ստամբուլում և Բաքվում մեր դարավոր թշնամին՝ հալածված բորենու կատաղությամբ և զազանային ատելությամբ կրճտացնում է ատամները, երբ ամեն տարի մայիսի 9-ին հպարտությամբ տոնում ենք մեր հաղթանակի օրը:

### Մեծ հայրենականը նաև հայ ժողովրդի գոյամարտն էր (միմիայն վիճակագրություն)

Տողերիս հեղինակը անցյալ տարի մայիսի 9-ին թողնեի հետ եղավ Հաղթանակի զբոսայգում: Ինձ չգարձացրեց ծաղկեպսակների և ծաղիկների առատությունը անմար կրակի մոտ: Պարզապես հպարտություն ապրեցի Ամհայտ զինվորի գերեզմանին ակնածանքով խոնարհվող ջահել աղջիկների և տղաների համար, բազում երիտասարդ զույգերի համար, որոնք մանկասայլակներով, իրենց պստիկների հետ էին եկել այդ:

Ես ականա հիշեցի ՀՀ-ական պարագլուխների բնութագրումները Մեծ հայրենականին, արհամարհանքը պատերազմի վետերանների նկատմամբ, որը անարգանք էր, սրբապղծություն հարյուր հազարավոր զոհերի հիշատակի նկատմամբ: Չէ՞ որ Հայաստանում չկար տուն և գերդաստան, որը կորուստ չունենար...

Հայրենական մեծ պատերազմում խորհրդային Միության հերոսի բարձր կոչման արժանացած 11.600 մարտիկներից 99-ը հայեր են: Ընդհանրապես հերոսի կոչման է արժանացել 106 հայ ռազմիկ, որոնցից 4-ը Մեծ հայրենականին նախորդած խորհրդա-ֆիննական ռազմարշավի ժամանակ (կամպանիայում), 3-ը՝ հետպատերազմյան տարիներին գործած քաջագործությունների համար:

«Ժողովուրդների պատերազմին» մասնակցել է շուրջ 600.000 հայորդի, որի կեսը խորհրդային Հայաստանից, ավելի քան 200.000-ը՝ խորհրդային Միության մյուս հանրապետություններից, իսկ 100-հազարը՝ հայկական Սփյուռքից: Ռազմաճակատ մեկնեց Հայաստանի 1,3 մլն բնակչությունից ավելի քան 300 հազարը, այսինքն՝ յուրաքանչյուր երկրորդը կյանքը դրեց հայրենիքի զոհասեղանին: Աշխարհը ֆաշիզմից փրկելու գոյամարտում զոհվեց ավելի քան 200 հազար հայ մարտիկ:

Հերոսների թեմային ավելացնենք մահ, որ պատերազմի տարիներին 27 հայ զինվոր դարձավ Փառքի չբանջանի բոլոր 3 աստիճանների ասպետ, ինչը հավասարազոր է խորհրդային Միության հերոսի կոչմանը:

1945 թ. վերջի տվյալներով պատերազմին մասնակցեցին 68 հայ զենեռալ, խորհրդային Միության մավատորմի 1 ծովակալ (Հ. Իսակովը), օդուժի 1 Գլխավոր մարշալ (Ս. Խուդյակով-Խանփերյանը): Նա հայերից առաջինն էր, ով պատերազմի շրջանում 1944 թ. օգոստոսին, արժանացավ այդ բարձր կոչմանը:

Հետպատերազմյան ժամանակահատվածում պատերազմի մասնակից ևս 94 հայորդի արժանացել է զենեռալի և ծովակալի (ադմիրալի) կոչման, այդ թվում՝ 1955 թ. Հ. Բաղդամյանին շնորհվեց խորհրդային Միության մարշալի, իսկ Հ. Իսակովին՝ խորհրդային Միության մավատորմի ծովակալի կոչում: Ավելացնենք՝ ծովային հայ սպաներից 4-ին շնորհվել է փոխծովակալի, 5-ին՝ դերժովակալի կոչում: 1975 թ. Հ. Բաբաջանյանին շնորհվել է զրահատանկային զորքերի Գլխավոր մարշալի, 1960-ին՝ Ա. Ազանովին՝ ինժեներական զորքերի մարշալի կոչում: Այսպիսով, ընդհանուր հաշվով զորավարական բարձր կոչման է արժանացել պատերազմի մասնակից 162 հայ:

Պատերազմի տարիներին խոշոր զորամիավորումներ ղեկավարած ավելի քան 60 հայ զենեռալներից Հ. Բաղդամյանը ռազմաճակատի հրամանատար էր, Ի. Իսակովը խորհրդային Միության ռազմածովային մավատորմի նախարարի տեղակալ էր, ռազմածովային գլխավոր շտաբի պետը, Ս. Խուդյակովը՝ ռազմաօդային ուժերի պետը: Երեքը բանակի հրամանատարներ էին (այդ թվում՝ հրետանու զենեռալ-գնդապետ Ս. Բարսեղովը՝ 40-րդ գվարդիական փառապանծ բանակի), 8-ը կորպուս էին ղեկավարում, 28-ը՝ դիվիզիա, ավելի քան 100-ը բրիգադի ու գնդի հրամանատարներ էին:

Հայ ժողովրդի գավակները մարտնչել են բոլոր ռազմաճակատներում, բոլոր զորատեսակների շարքում, ակտիվորեն մասնակցել բոլոր վճռական ճակատամարտերին, աչքի ընկել զորավարական տաղանդով: Որպես ասվածի ապացույց նշենք, որ, պաշտոնական տվյալ-



## Ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը 80 տարեկան է

**2020 թ. ապրիլի 7-ին լրացավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի լազերային ֆիզիկայի և սպեկտրասկոպիայի լաբորատորիայի վարիչ Ռադիկ Բենիկի Կոստանյանի ծննդյան 80-ամյակը:**

Ռադիկ Բենիկի Կոստանյանը իր գիտական գործունեությունը սկսել է 1962 թվականին՝ Երևանի պետական համալսարանում, ֆիզիկայի ֆակուլտետում ավարտելուց և համալսարանում աշխատանքի մշակակելուց հետո: ԵՊՀ-ում աշխատելու տարիներին, մինչև 1972 թվականը, Ռ. Կոստանյանը հետազոտել է ռուբինային օպտիկական քվանտային զեմերատորների ճառագայթման և ռեզոնանսային միջավայրերի փոխազդեցության երևույթները, որի արդյունքում ստացվել են նոր հետաքրքիր գիտական արդյունքներ. փորձնականորեն ուսումնասիրվել են ռուբինային լազերների էներգիական, սպեկտրային, ժամանակային բնութագրերի և ճառագայթման փուլի փոփոխությունները, որոնք ծագում են ռեզոնանսային միջավայրերի հետ փոխազդեցության հետևանքով: Հանրապետությունում ռուբինային լազերների արտադրության գործում կարևոր էին նաև այդ ժամանակ կատարված լազերների և ուժեղացուցիչների բնութագրերի ուսումնասիրությունները՝ կախված ակտիվ միջավայրերի և կիրառվող ռեզոնատորների պարամետրերի համալիրից: Դեռևս այդ շրջանում կատարված հետազոտությունների արդյունքները ընդգրկվել են 1967 թվականին Մոսկվայում հրատարակված Ա. Ա. Микаелян, М. А. Тер-Микаелян и Ю. Г. Турков «Оптические генераторы на твердом теле», մենագրության մեջ և հետագայում՝ ամփոփվել են «Ռեզոնանսային միջավայրով անցնող ռուբինային ՕԶԳ-ի ճառագայթման բնութագրերի ուսումնասիրությունը» թեկնածուական ատենախոսությունում, որը Ռ. Կոստանյանը պաշտպանել է 1975 թվականին: 1972 թ. Ռ. Կոստանյանը տեղափոխվել է ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (ՖԻԻ), որտեղ և աշխատում է մինչ այժմ: Այդ շրջանի գիտական նվաճումների համար Ռ. Կոստանյանը 1978 թ. պարգևատրվել է ՀԽՍՀ ԳԱ գովեստագրով, 2013 թվականին՝ վաստակագրով: 1978 թվականից նա համդիսանում է իր կողմից հիմնադրված պիոնյարմային լազերների և սպեկտրոսկոպիայի (այժմ՝ լազերա-

յին ֆիզիկայի և սպեկտրասկոպիայի) լաբորատորիայի վարիչ, որտեղ կազմակերպում է հետազոտական աշխատանքները իր ասպիրանտների և երիտասարդ աշխատակիցների հետ համատեղ՝ ղեկավարելով նրանց գիտական գործունեությունը:

ՖԻԻ-ում նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը զգալիորեն ընդլայնվում է՝ ընդգրկելով լազերային ֆիզիկայի զարգացման համար կարևոր և այժմեական այնպիսի ուղղությունները, ինչպիսիք են ակտիվացված բյուրեղների սպեկտրասկոպիան, լազերային բյուրեղներում ակտիվ խառնուրդային իոնների միջև փոխազդեցությունների բազմակողմանի պրոբլեմները, նրանց էներգետիկ մակարդակների բնակեցմանը և տրոհմանը առնչվող երևույթները, այդ ամբողջ համալիրի ազդեցությունը պիոնյարմային լազերների աշխատանքի վրա և տարբեր ռեժիմներում և սպեկտրալ տիրույթներում բարձր արդյունավետությամբ աշխատող նոր լազերների ստեղծումը:

որ ուսումնասիրումը և նրանց հիմքով նոր լազերների ստեղծումը» ղոկտորական ատենախոսությունում, որը նա պաշտպանել է 1992 թ.-ին:

Ռ. Կոստանյանի գիտական գործունեությանը բնորոշ են արդիականությունը, նորարարությունը, բազմազանությունը և նպատակաուղղվածությունը: Ընդլայնելով հետազոտ աշխատանքների բնագավառը, Ռ. Կոստանյանը ուսումնասիրում է հազվագյուտ հողի և անցումային խմբի տարբեր իոնների խառնուրդով սեզոնետիկայի բյուրեղների հատկությունները: Ստացվել են մի շարք նոր հետաքրքիր արդյունքներ մեկ բյուրեղում լազերային ճառագայթման գեներացման և ձևափոխման ֆունկցիաները համատեղելու և խառնուրդային իոնների գրգռման ժամանակ լուսամակածված էլեկտրական ազդանշաններ ստանալու վերաբերյալ: Բացահայտվել են նաև բնեռային բյուրեղներում խառնուրդային իոնների գրգռված մակարդակների դիպոլային մոմենտների և էրբիումի իոնների ստատիկ բնեռայնության չափ-

ման նոր հնարավորություններ, որոնք կարող են բերել բյուրեղների ուսումնասիրման նոր մեթոդների ստեղծման: 1998-1999 թթ. հայտնաբերվել և ուսումնասիրվել է նոր՝ լուսամակածված պիեզոէլեկտրական երևույթը բնեռային դասի խառնուրդային բյուրեղներում, օպտիկական տիրույթի ճառագայթմամբ խառնուրդային իոնների ռեզոնանսային գրգռման դեպքում:

Ռ. Կոստանյանի աշխատանքներից կարևոր է հիշատակել լազերային բյուրեղներում հազվագյուտ հողի տարրերի իոնների միջշտարկյան անցումային և աղքատ էներգիական սպեկտր ունեցող իոնների սպեկտրասկոպիային վերաբերող արդյունքները, որոնք հնարավորություն են տալիս որոշելու բյուրեղների լազերային հնարավորությունները բնորոշող սպեկտրասկոպիկ պարամետրերի համալիրը, դրանց փոփոխման ջերմային և կոնցենտրացիոն օրինաչափությունները: Վերջին տարիներին աշխատանքներից հարկ ենք հանդիսանալու կրկնակի իոններով ակտիվացված լազերային բյուրեղներում գրգռման էներգիայի արդյունավետ օգտագործմանը և մոտակա ինֆրակարմիր տիրույթի ժամանակակից լազերների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղվածորեն սպեկտրադիտական սխեմաների հայտնաբերման վերաբերյալ հիմնարար և կիրառական տեսախոսություններից կարևոր և հեռանկարային հետազոտությունները: Արդիական և կարևոր են նաև լաբորատորիայի գործընկերների հետ իրականացվող էլեկտրական և ակունային ազդեցություններով ջրային լուծույթներում խթանված միջուկային երևույթների և օբյեկտների հեռահար մոնիտորինգի օպտիկական նոր այլընտրանքային եղանակների հետազոտությունները և նրանց կիրառման ոլորտների բացահայտման ուղղված աշխատանքները:

Ռ. Կոստանյանը շուրջ 200 գիտական աշխատանքների հեղինակ է: Այդ աշխատանքների արդյունքները քննարկվել են ավելի քան 50 հեղինակավոր հայրենական և միջազգային գիտաժողովներում և լայնորեն հայտնի են ինչպես խՍՀՄ-ի, այնպես էլ արտասահմանյան երկրների մասնագետներին և հղվում են բարձր վարկանիշ ունեցող հեղինակավոր պարբերականներում: Կիրառական տեսակետից առանձնապես կարևոր են հետազոտությունների ընթացքում մշակված ակտիվ բյուրեղների լազերային հնարավորությունները բնորոշող պարամետրերի չափման հեղինակային իրավունքներով հաստատված մեթոդները և ստեղծված տարբեր լազերները, որոնք օգտագործվել են խՍՀՄ գերատեսչություններում կատարված աշխա-

տանքներում:

Գիտական գործունեությանը համատեղ Ռ. Կոստանյանը կատարում է մանկավարժական և կազմակերպչական աշխատանք: Համալսարանում աշխատելու տարիներին նա օժանդակել է ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոնում ուսանողական փորձեր ղեկուն և բացատրական կազմելու: Հետագայում ՖԻԻ-ում աշխատելու տարիներին դասախոսությունների հատուկ դասընթացներ է կարդացել ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ֆակուլտետի ուսանողներին: Բազմիցս եղել է ֆիզիկայի ու ռադիոֆիզիկայի ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական քննությունների և թեզերի պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ: Ռ. Կոստանյանը եղել է ԵՊՀ բազմաթիվ ուսանողների դիպլոմային աշխատանքների, յոթ թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար և դոկտորական ատենախոսության գիտական խորհրդատու: Ռ. Կոստանյանը լազերային ֆիզիկայի հայկական դպրոցի վառ անհատականություններից է, որն իր հիմնադրած լաբորատորիայում ստեղծել է պիոնյարմային լազերների և ակտիվ բյուրեղների սպեկտրադիտության դպրոց:

2009 թվականին արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի՝ ղեկավարվող բնութագրերով լազերային ակտիվ և ոչ գծային օպտիկական նյութերի ստեղծման և հետազոտման համար: 2009 թվականին ընտրվել է Ռուսաստանի Դաշնության Ա. Մ. Պրոխորովի անվան ճարտարագիտական ակադեմիայի արտասահմանյան անդամ և ակունային ալիքների միջոցով սառը պլազմայի բնութագրերի կառավարման մեթոդի ստեղծման համար համահեղինակների հետ դարձել է ճարտարագիտական ակադեմիայի ֆիզիկայի պրոֆեսորական մրցանակաբաշխության դափնեկիր:

2014 թվականին Ռ. Կոստանյանը ընտրվել է ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, իսկ 2016 թ.-ից առ այսօր գլխավորում է ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքը՝ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում:

Ռ. Կոստանյանը կատարում է ակտիվ հասարակական աշխատանք՝ 1980 թվականից եղել է Խորհրդային Միության քվանտային էլեկտրոնիկայի գծով կոորդինացիոն խորհրդի N 1 սեկցիայի (պիոնյարմային լազերների) անդամ, ՖԻԻ-ի գիտական խորհրդի անդամ, ԲՈՀ-ի ատենախոսությունների պաշտպանության մասնագիտացված խորհրդի անդամ, քարտուղար և այլն: Լեոնիդ Խորհրդի նախագահ:

Ներկայումս Ռ. Կոստանյանը ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ է, «Ֆիզիկա» տեղեկագրի խմբագրական կոլեգիայի անդամ, Հայաստանի Հանրապետության ԲՈՀ-ի ԵՊՀ-ին կից լազերային ֆիզիկա մասնագիտությամբ ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալ, միջազգային լազերային ասոցիացիայի ԱՊՀ երկրների լազերների ֆիզիկա և գիտական սարքաշինություն մասնագիտությունների միջազգային փորձագետների կոլեգիայի անդամ, ՖԻԻ գիտական խորհրդի անդամ:

Բարձր գիտական մակարդակ, լայն մտահորիզոն, բացառիկ պահանջկոտություն իր նկատմամբ, փորձարարական մեծ վարպետություն, լուծվող պրոբլեմների այժմեականություն, բարձր պատասխանատվության աստիճան, բացառիկություն և բարեկեցություն:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն**  
**ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք**  
**ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ**

## ՄԵՐ ՀԱՂԹ-ԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՅԻՍԸ

➤1 մերի համաձայն՝ պատերազմի տարիների գեներալների թվով ռուսներից, ուկրաինացիներից ու բելոռուսներից հետո չորրորդ տեղն զբաղեցրել են հայերը: Ռազմաօդային և հրետանային ուժերի սպայական կազմում նրանք նույնպես չորրորդն էին: Իսկ մարտական շքանշաններով ու մարտական մեդալներով պարգևատրվածների, Խորհրդային Միության հերոսների և գեներալների թվով, 10 հազար բնակչի հաշվով, հայերը ռուսներից հետո երկրորդ տեղում են: Պատերազմի տարիներին Ֆրոնտգեի անվան ռազմական ակադեմիայի 42 ազգության ունկնդիրների շարքում ևս հայ սպաները թվով չորրորդն էին, իսկ հրետանային ուսումնարաններում սովորողների թվում՝ երրորդը:

Առանձնակի հիշատակության է արժանի Կարմիր բանակի շարքերում կռվող հայկական զուտ ազգային վեց դիվիզիայի հերոսական պատմությունը (7 ման միավորում էլ համալրված էր զգալի թվով հայերով): Նրանք հերոսաբար կռվեցին պատերազմի ամենաարյունալի տեղամասերում: Բելոռուսական ռազմաճակատի կազմում ծանր մարտեր մղելով՝ Կովկասից Կուբան, Թաման, Կերչ, Դրիմ, մինչև Լեհաստան ու Գերմանիա, ավելի քան 7500 կմ հերոսական մարտական ուղի անցավ 1941-ին Երևանում ձևավորված և 1942-ին ռազմաճակատ մեկնած 89-րդ հայկական Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիան՝ գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ:

Այս ամենից հետո հայտարարել, որ Հայրենական մեր պատերազմը չէր, պարզապես կեղծիք է, սուտ: Մեծ հայրենականը նաև մեր գոյամարտն էր: Դրա վառ վկայությունն էր «Հաղթանակի» բազմամարդ զբոսայգին, մանկասայլակներով հուշարձանի այցի եկած երիտասարդ հայերն ու մայրերը և պատերազմած, հաղթանա-

կած այն զինվորների դիմանկարները, որոնք ցուցադրում էին Ամնահների գնդի մասնակից երիտասարդները՝ անմահ հերոսների թոռներն ու ծոռները:







# ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՅԱՆՔ

## ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ ձեռք են բերել Հայաստանի համար եզակի էլեկտրոնային մանրադիտակ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ ձեռք են բերել Հայաստանի համար եզակի «JEOL-JCM-7000 NeoScope» մոդելի տեսաձրող էլեկտրոնային մանրադիտակ: Այն հնարավորություն է տալիս կտրուկ միջազգային, նյութագիտություն, բրուտագործություն, մանոտեխնոլոգիա, երկրաբանություն, սննդագիտություն և այլ ոլորտներում իրականացնելիք հետազոտությունները հասցնել նոր որակի: JEOL-JCM-7000 NeoScope մանրադիտակի շնորհիվ հնարավոր է մեծացնել նմուշի պատկերը 100000 անգամ, որոշել մասնիկների չափերը: Մանրադիտակը հնարավորություն ունի միաժամանակ որոշելու նմուշում առկա 40 տարրի պարունակությունը և ստանալու ընտրված հատվածի առանձին տարրերի պարունակությունների բաշխման քարտեզներ:



Շրջակա միջավայրին և երկրաքիմային վերաբերող ուսումնասիրություններում մանրադիտակը հնարավորություն է տալիս նմուշներում իրականացնելու

տարրերի որակական և քանակական վերլուծություն: Մանրադիտակը կարող է հիմնադր զործիք լինել սննդագետների համար սննդի որակի գնահատման և

մթերքների արտադրման գործընթացում: Կենսաբժշկական հետազոտություններում մանրադիտակը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու դեղորայքի, դեղարար նյութերի քիմիական բաղադրությունը, դրանց համասեռությունը, ինչպես նաև նյութերի ազդեցությունը մաշկի վրա: Տեքստիլ արդյունաբերության մեջ այն հնարավորություն է տալիս բացահայտելու մանրաթելի քիմիական բաղադրությունը, կառուցվածքը, տեսակը, ամրությունը, առաձգականությունը:

Ձեռք է բերվել նաև նմուշը ոսկեպատուղ սառք, որը հնարավորություն է տալիս հետազոտելու կենսաբանական նմուշներ:

Սարքավորումները ձեռք են բերվել ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի կողմից համատեղ իրականացվող «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն) կրթական ծրագրերի արդիականացումը Հայաստանի և Վրաստանի համար» էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում: Դրանք կիրառվելու են միևնույն ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնում ստեղծվող միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիայում: Բնապահպանության ոլորտում միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական լաբորատորիան ծրագրի հիմնական շոշափելի արդյունքներից է, որը եականորեն կբարելավի հետբուհական կրթության որակի չափանիշները: Լաբորատորիան հասանելի կդարձնի ժամանակակից լաբորատորային ենթակառուցվածքները և հնարավորություն կտա համալսարանների և արտաքին շահառուների միջև իրականացնելու տարբեր մախագծեր:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**

## ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց Լիլիթ Սահակյանը

Ապրիլի 22-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց աշխարհագրական գիտությունների թեկնածու Լիլիթ Սահակյանը:

Լիլիթ Սահակյանի գիտական գործունեության հիմնական ուղղությունը շրջակա միջավայրի երկրաքիմիան է, որի շրջանակներում նա հեղինակել է 120 գիտական աշխատություն, որոնցից 5 կոլեկտիվ մեմագրություն, 3 գիտամեթոդական ձեռնարկ և 70 գիտական հոդված:

Լիլիթ Սահակյանը ծնվել է 1979 թ.-ին Երևանում: 2000 թ.-ին ավարտել է ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետի բակալավրիատը, 2002 թ.-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ գեոէկոլոգ մասնագիտացմամբ: 2008 թ.-ին ստացել է աշխարհագրական գիտությունների թեկնածուի աստիճան:

1999 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնում՝ սկզբում որպես լաբորանտ, այնուհետ կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժնում, ապա նույն բաժնի ղեկավար 2010-2017 թթ.-ին: 2014թ.-ից ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի գիտական գծով փոխտնօրենն է:

2010 թ.-ից դասավանդում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայում և ասպիրանտուրայում «Շրջակա միջավայրի երկրաքիմիա» և «Հետազոտության տրամաբանություն» առարկաները:

Լիլիթ Սահակյանը ՀՀ նախագահի բնական գիտությունների բնագավառում լավագույն երիտասարդ գիտնականի մրցանակակիր է:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**

## Վերապահման փառատոն

Եգիպտոսի Լուքսոր քաղաքում կայացավ Ռամզես II Փարավոնի 11 մետր բարձրությամբ արձանի հանդիսավոր բացումը: Սև գրանիտից պատրաստված 75 տոննա կշռող արձանը հայտնաբերվել է 1958 թվականին՝ 57 կտորների վերածված: Գիտնականները ենթադրում են, որ արձանը ավերվել է ուժեղ երկրաշարժից, IV դարում: Հին ժամանակներում արձանը զարդարել է մ.թ.ա. 14-րդ դարում կառուցված Լուքսորի հռչակավոր տաճարի մուտքը:

Արձանը բացառիկ է նրանով, որ Փարավոնը պատկերված է կանգնած դիրքով, այլ ոչ թե գահին նստած, ինչպես ընդունված էր այն ժամանակներում: Փարավոնի ոտքերի մոտ տեղադրված է Փարավոնի կնոջ՝ Նեֆերտարիի մարմինը: Կնոջ բարձրությունը ընդամենը մեկ և կես մետր է: Արձանի ջարդված կտորները, որոնք պահվում են թանգարանում, որոշվեց հավաքել և ամբողջացնել որպես լիարժեք արձան, որ հնագետները որոշել էին անցյալ տարվա նոյեմբերին: Քանի որ արձանի կտորները լավ էին պահպանված, վերականգնման աշխատանքները տևեցին մոտ կես տարի:



## Կյանքից հեռացել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Համլետ Կարայանը

Ապրիլի 26-ին 75 տարեկան հասակում կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Համլետ Կարայանը:

Համլետ Կարայանի գիտական հետազոտությունները նվիրված են կիսահաղորդիչների և կիսահաղորդչային սարքերի ֆիզիկային, բազմարժեք էլեկտրոնիկային, բազմարժեք, քվանտային և մեյոնային հաշվարկներին, կիսահաղորդչային արևաէներգետիկային և օպտոէլեկտրոնիկային, ինֆորմացիոն-հաշվողական տեխնոլոգիաներին: Համլետ Կարայանը մշակել է էլեկտրոնախոռոչային պլազմայի ընդհանրացված տեսությունը: Հայտնաբերել է պլազմադաշտային փոխազդեցության էֆեկտը և դրա հիման վրա առաջարկել կիսահաղորդչային բազմափնթակ ու բազմազործառույթ սարք՝ պոլիստոր: Նա նախագծել է պոլիստորային բազմարժեք ինֆորմացիոն համակարգեր և համակարգիչներ: Հաշվարկել է բազմաշերտ կառուցվածքներում մեթոդներ ֆոտոէֆեկտի հիման վրա աշխատող արդյունավետ արևակայաններ: Համլետ Կարայանը տասնյակ գիտական աշխատությունների հեղինակ է, այդ թվում՝ ֆիզիկայի դասագրքի և ձեռնարկի:

Համլետ Կարայանը ծնվել է 1945 թ.՝ Տավուշի մարզի Աչաջուր գյուղում: 1968 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը՝ «Կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկա» մասնագիտությամբ: 1970 թ. սկսել է գիտահետազոտական աշխատանքներ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում: 1976 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1986 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: 1988 թ.-ին ստացել է պրոֆեսորի կոչում, իսկ 2006 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Համլետ Կարայանը պարգևատրվել է ԵՊՀ ոսկե մեդալով:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը և ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքը սգում են Համլետ Կարայանի մահը և ցավակցում նրա հարազատներին:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**

(Սկիզբը՝ ճախորդ համարում)

Սփյուռքահայ, այդ թվում նաև ամերիկահայ, առաջադիմական ուժերի միասնական ճակատները միավորել են կոմունիստներին, հնչակյաններին, ռամկավարներին, երիտասարդական միություններին անդամներին, ինչպես նաև՝ անկուսակցականներին (չեզոք), որոնք համոզեց են եկել ՍՍՀՄ-ին բարոյապես ու նյութապես սատարելու կոչերով: 1941 թ. օգոստոսին Նյու Յորքում տեղի ունեցած զանգվածային հանրահավաքի ժամանակ ՍՍՀՄ կառավարությանն ուղղված դիմումում ամերիկահայերը դա հիմնավորել են հետևյալ կերպ. «Մենք, ամերիկահայերս, որոնց բնիկ երկիրը կը պաշտպանե Կարմիր Բանակը, կզգանք, որ պարտաւոր ենք օգնելու Սովետ Միությանը, պայքարելու մինչև այն ատեն, երբ ամբողջ աշխարհի երեսներ կոչնչացուի ֆաշիզմը»:

բար և տարագիր հայության հայրենադարձությունը կազմակերպելու անհրաժեշտության հարցը սփյուռքահայությունը հավաքաբար սովետական կառավարությանն էր ներկայացրել դեռևս 1945 թ. ամռանը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու նպատակով գրեթե բոլոր համայնքներից Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ժամանած իր աշխարհիկ և հոգևոր պատգամավորների միջոցով:

Բայց և այնպես, Պոտսդամի կոնֆերանսում ՍՍՀՄ ղեկավարության կողմից, առաջադրված ցարական Ռուսաստանի մաս կազմող հայկական տարածքների վերադարձի հարցը մերժվել էր արևմտյան տերությունների, այդ թվում և ԱՄՆ-ի կողմից:

Հայության արդար իրավունքները վերականգնելու հարցը սփյուռքահայությունը բարձրացրել է նաև 1947 թ. ապրիլին

3.000 հայերի մասնակցությամբ կայացած զանգվածային մեծ հավաքում ընդունվել է բանաձև, որտեղ ամրագրվել է սփյուռքահայության գործնական խնդիրը՝ ՄԱԿ-ի միջոցով հասնել հայկական տարածքային պահանջների բավարարմանը, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել տարագիր հայության հայրենադարձությունը:

Բայց և այնպես, հայ սփյուռքի 22 երկրներից Հայկական համաշխարհային կոնգրեսի (Նյու Յորք, 1947 թ. ապրիլ 30 - մայիս 4) կողմից ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դին Աչեսոնին մայիսի 12-ին ներկայացրած հուշագրին (որով ամերիկյան կառավարությանը խնդրվում էր ՄԱԿ-ի օրակարգի մեջ մտցնել հայկական հողային պահանջների հարցը) ԱՄՆ-ի ղեկավարությունն ընթացք չի տվել՝ պատճառաբանելով, թե այն հավասարազոր կլիներ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հակառակորդ

կախյալ):

Այնպես որ, ժամանակաշրջանի պատմաբանական, ընկերային-տնտեսական, ինչպես նաև միջազգային զարգացումների օբյեկտիվ հանգամանքների բերումով ՍՍՀՄ մաս կազմող Սովետական Հայաստանը դարձավ իր բռնազավթված երկրի տարածքները վերագտնելու հույսով ներշնչված արևմտահայության ներգաղթի փաստացի և իրական հանգրվանը, որտեղ պետք է համախմբվեր պատմական Հայրենիքը երբևէ միասնական տեսնելու նվիրական երազանքն արթուն պահող պանդուխտ հայությունը:

Այդուհանդերձ, «անհայրենիք պետության ստեղծելու» գաղափարախոսների և իրագործողների կողմից Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենազրկված և աշխարհի տարբեր երկրներում ապաստան գտած հայությանն իր պատմական

# ԱՄՆ-Ի ՀԱՅԵՐԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

(100-ամյա ուրվագիծ՝ XX-XXI դդ. սկիզբ)

1943 թ. օգոստոսին Ստալինգրադյան ճակատամարտում խորհրդային երկրի տարած հաղթանակը մեծ բեկումն մտցրեց նաև սփյուռքահայության զգալի մասի շրջանում ՍՍՀՄ-ի նկատմամբ դիրքորոշումը որոշակիացնելու հարցում:

Արդեն 1944 թ. մարտի 19-ին Նյու Յորքում ձևավորված Ամերիկահայ ազգային խորհուրդը՝ ամերիկահայ տարբեր կազմակերպությունների միասնական ճակատը (բաղկացած ՌԱԿ, ՄԴՀԿ, Ամերիկահայ Առաջադիմական Միության, ՀԲԸՄ, հարանվանական եկեղեցիների, տարբեր հայրենակցական և այլ միությունների ներկայացուցիչներից), երկրով մեկ տարածված իր բազմաթիվ մասնաճյուղերով, միջոցառումներ, հանգամանություններ ու նվիրատվություններ է կազմակերպել՝ ի նպաստ Կարմիր բանակի:

Համայն հայությունը հուսադրվել էր, երբ նաև սփյուռքի գրեթե բոլոր կազմակերպությունների միաձայն (այդ թվում՝ ՀՀԴ-ի առանձին) դիմումին ի պատասխան սովետական կողմը թուրքիայի և խորհրդային Միության միջև սահմանի վերանայման ու կարգավորման, երբեմնի Ցարական Ռուսաստանի մաս կազմող Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքների, մասնավորապես՝ Կարսի, Արդահանի, Արդվինի շրջանները ետ վերադարձնելու հարցը քննարկման առարկա դարձրեց ինչպես ՍՍՀՄ-ի և Թուրքիայի կառավարությունների միջև 1945 թ. Անկարայում, ապա՝ Մոսկվայում, նույնպես և դաշնակից երեք մեծ տերությունների՝ ՍՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, ղեկավարների միջև Պոտսդամի կոնֆերանսում: (1945 թ., հունիսի 17 - օգոստոսի 2):

Ի դեպ, բռնազավթված հայկական հողերը Թուրքիայից պահանջելու, հետևա-



ԱՆՉԱ-յի նախագահ Ջորջ Մարտիրոսյան

Նյու Յորքում բացված Հայկական համաշխարհային կոնգրեսում, որին մասնակցում էին տարբեր համայնքների հասարակական-քաղաքական հոսանքների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նրանք, քննարկվելով ներգաղթի և Հայաստանի վերաշինության շուրջ բոլոր հայ համայնքների միջև միության և համերաշխ գործակցության հաստատման հարցը, որոշել են զորացնել համայնքների և Մայր Հայրենիքի միջև հոգևոր-մշակութային կապը, միջազգային ասպարեզում հասարակական կարծիք ձևավորել հայկական հողային պահանջների արդարացիության նկատմամբ՝ հարցի քաղաքական լուծումը վերապահելով Միավորված ազգերի կազմակերպությանը: Հայկական համաշխարհային կոնգրեսի ավարտին Նյու Յորքում



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԿԱՄԱՌԱՌՐՆԵՐԸ Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՄԵՋ

ՍՍՀՄ-ի ծավալմանն ու հզորացմանը:

Հակառակ որ Արևմուտքի երկրների կողմից հայության արդար պահանջներն անտեսվել են, ՍՍՀՄ կառավարության համաձայնությամբ 1946-1949 թթ. կազմակերպվել և իրականացվել է աշխարհի 12 երկրներից ավելի քան 90 հազար հայերի զանգվածային հայրենադարձությունը Սովետական Հայաստան, ինչը արտերկրում ցրված հայության ազգային գեներալի պահպանմանն ուղղված, ինչպես նաև Հայաստանի համար քաղաքական-ռազմավարական, ընկերային-տնտեսական, մշակութային-բարոյական և բազմակողմանի նշանակություն ունեցող դարավազմիկ իրադարձություն էր (ԱՄՆ-ից ամենից քիչ թվով հայեր են ներգաղթել Սովետական Հայաստան. 1947 թ.՝ ընդամենը 51 ամերի-

հայրենիքի 1/10 հողատարածքի վրա Հայաստանի խորհրդայնացումով գոյատևած հայրենիքից հեռու պահելու և պարբերաբար ավելի հեռացնելու գործընթացն էր կորոշ աշխարհամարտի վերջում և հետագա տարիներին առավել թափ ստացավ՝ ՍՍՀՄ-Արևմուտք գաղափարառազմավարական և պատմաքաղաքական առճակատման խորացմանը և հաջորդած Սառը պատերազմին զուգընթաց:

(շարունակելի)

**Քնարիկ ԱՎԱԳՅԱՆ**  
Պատմական գիտությունների  
թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության  
ինստիտուտի առաջատար  
գիտաշխատող

## Գիտնականները յուրացրին տելեպատիան (պայծառատեսությունը)

Եվ այսպես, ստեղծվել է սարք, որի օգնությամբ առաջին անգամ հաջողվեց կարդալ մտքերը:

Նեյրոկենսաբանները ավելի ու ավելի են մոտենում այն մեթոդներին, որոնց օգնությամբ նրանք ուղղակի հաղորդակից կդառնան մարդու մտքերին...

Իսկ դրանք՝ այդ մտքերը, բնավորված են մեր ուղեղի հատուկ հատվածում՝ քունքի վերին անկյունում: Դա լսողական համակարգի մի մասն է, պատասխանատուն այն ֆունկցիայի, որ մենք ծայրերի հոսքից պեղում ենք ինչ-որ միտք, տարբերակում բառերը և հասկանում դրանց իմաստը:

Ապա հենց այդ տեղամասն են մտել կալիֆոռնիական Բերկլիի համալսարանի գիտնականները:

Տեսականորեն փորձի համար հիմք է ծառայել նախկինում արված այն հայտա-

րարությունը, երբ ինչ-որ բառ «երևակայելիս» ակտիվանում է գլխուղեղի հենց այն նույն հատվածը, ինչը տեղի է ունենում բառի արտասանության ժամանակ:

Փորձին մասնակցեց 15 մարդ. նրանցից ամեն մեկի գանգի մեջ մտցվեց 256-ական էլեկտրոդ: Եվ ապա, էլեկտրաէնցեֆալոգրամի միջոցով սկսեցին որսալ էլեկտրական այն ազդանշանները, որոնք արձակում է ուղեղը, երբ մարդ մտածում է: Չէ՞ որ ամեն անգամ չարտասանված բառին համապատասխանում է ուղեղային իմպուլսների յուրահատուկ մի ամբողջություն:

Վերծանելով քունքի հատվածում առաջացած էլեկտրաիմպուլսների քառասյին հոսքը՝ հետազոտողները գտան հիմնական հաճախությունները, որոնք տարբերակում են տվյալ խոսքի հնչյունները մյուսներից: Եվ հատուկ համակարգչային

ծրագրի միջոցով նրանք գտան այն բառերը, որոնք «հնչել են» փորձարկվողի գլխում:

- Մենք արձանագրված ուղեղային իմպուլսները նորից վերածեցինք ծայրային ալիքների, բացատրում է հոգեբանության և նեյրոլոգիայի պրոֆեսոր Ռոբերտ Նայտը: Եվ մարդու մտքերը դարձան լսելի՝ շրջանցելով ծայրային ապարատը: Բառը, որը «արտասանել է» ուղեղը, դժվարությամբ, սակայն կարելի է լսել: Այնպես որ մարդու ներքին չբարձրածայնած մեմախոսությունները լսելը միանգամայն իրական է:

Գիտնականները այս հեղաշրջող տեխնոլոգիան համեմատում են այն երևույթի հետ, երբ դաշնակահարը նվագում է, իսկ մյուս դաշնակահարը ծայրամեկուսիչ ապակու միջով «լսում է» երաժշտությունը նվագողի մատների շար-

ժումների միջոցով:

Իհարկե, նման հետազոտությունները նախատեսված չեն կրկեսային ներկայացումների համար: «Միտքը կարդալու» մեթոդը հնարավորություն կտա վերականգնել, կարդալ անդամալույծ հիվանդի խոսքը: Հերիք է, որ խոսելու ընդունակությունից զրկված հիվանդը մտածի, թե ինչ է ինքը ասել, և նրա ցանկությունը անմիջապես կկատարվի:

Ճշմարիտ է, ծրագրի հեղինակները խոստովանում են, որ դեռևս հսկայական ջանքեր են պետք ուղեղի ծայրը ճանաչող տեխնիկան կատարելագործելու ուղղությամբ: Եվ, բացի այդ, գանգի մեջ վիթխարի քանակությամբ էլեկտրոդների տեղադրումը պետք է դարձնել անցավ: Այնպես որ, փոքրիկ սարքը, որ վերծանում է միտքը, դեռևս շատ շուտ չի լինի:

**Նմարիկ ՊՈՆՈՒՆԻՆ**





## ԱՌԱՍՊԵՆԱՅԱԾ

Հետախուզությունը պետության ու ժողովրդի պաշտպանության կարևոր միջոցներից է: Ուստի հետախույզը իր դերով ու նշանակությամբ հավասար է զինվորականին՝ այն տարբերությամբ, որ վերջինս գործում է բացահայտ, իսկ ինքը՝ ծածուկ, նրա գործն աներևույթ է՝ պատված գաղտնիության ցողով, խրախուսանքներն ու պարգևներն էլ հաճախ տրվում են գաղտնիության պայմաններում: Այս ասպարեզում ևս կա հայկական հետք, այն կերտողներից է Գևորգ Վարդանյանը:

Ծնվել է 1924 թ. փետրվարի 17-ին Դոնի Ռոստովում: Հետախուզությունում է 1940 թ.-ից: Մեկ այլ մեծ հետախույզի՝ Իվան (Հովհաննես) Աղայանցի հանձնարարությամբ թեհիրանում երկրորդ համաշխարհային ժամանակ կազմավորում ու ղեկավարում է հատուկ խումբ, որն ստանում է «Թեթև հեծելազոր» անվանումը: Խումբը, որի անդամների մեծամասնությունը հայ երիտասարդներ էին, միայն առաջին 2 տարում հայտնաբերում է այս կամ այն կերպ գերմանական հետախուզության հետ կապված 400-ից ոչ պակաս մարդու: 1942 թ. խմբին անդամակցում է 16-ամյա Գոհարը, ով 1946-ին դառնում է Վարդանյանի կինը, զինակցուհին ու սխրակցուհին: 1943 թ. «Թեթև հեծելազոր» մասնակցում է թեհիրանի կոնֆերանսի հակահետախուզական ապահովմանը: Հիմնականում Գևորգ Վարդանյանի, նրա կնոջ և նշված հեծելազորի շնորհիվ հնարավոր է լինում կանխել «Մեծ եռյակի»՝ Ստալինի, Ռուզվելտի և Չերչիլի դեմ իրականացվելիք մահափորձը, որը, եթե հաջողությամբ պսակվեր, կխախտեր աշխարհի քաղաքական հավասարակշռությունը: Թեհիրան 43-ից 60 տարի անց Ուլիստոն Չերչիլի թոնոուհին՝ Սիլիա Սանդիսը, հատուկ գալիս է Մոսկվա և ամփոփում հայ մեծ հետախույզին շնորհակալություն հայտնում իր պապի անվտանգությունն ապահովելու համար: Թեհիրանից հետո տասնամյակներ ի վեր Վարդանյան ամուսիններն աշխատում են արտերկրում: 1984 թ. հետախուզական գործունեության մեջ ներդրած մեծ ավանդի համար Գևորգ Վարդանյանն արժանանում է Խորհրդային Միության հերոսի կոչման, միակ խորհրդային հետախույզը, ով այս կոչումն ստացել է խաղաղ ժամանակ, կենդանության օրոք, ընդ որում՝ երկար տարիներ չլինելով կադրային չեկիստ: 1986-1992, 1993-2011 թթ. գնդապետ Վարդանյանն աշխատում է արտաքին հետախուզության կենտրոնական ապարատում, մասնակցում երիտասարդ աշխատակիցների ընտրության, ուսուցման և դաստիարակության աշխատանքներին: Աշխարհն առաջին անգամ Վարդանյաններ առասպելի մասին իմացավ 2000 թ., երբ մամուլում տպագրվեց հետախույզների գործունեության թեհիրանյան փուլը մանրամասն նկարագրող անդրանիկ հոդվածը, առաջին անգամ հիշատակվում են Վարդանյան ամուսինների իսկական անուն-ազգանունները:

Հետախուզության աստվածներից մե-

կը կյանքից հեռացավ 2012 թ. հունվարի 10-ին Մոսկվայում:

Առասպելական զույգի միակ սխրանքը, որ հայտնի է, մասնակցությունն է Ստալինի, Չերչիլի ու Ռուզվելտի դեմ մահափորձի կանխմանը: Ի դեպ, նրանց գործունեության նշված «խրանյան» շրջանը գաղտնագերծված է մասամբ, այն, ըստ Գևորգ Վարդանյանի, կազմում է ընդհանուրի տոկ 5-10 տոկոսը: Հավելենք, որ հետախույզին հերոսի կոչում է շնորհվել ոչ այդ գործողության համար: Պատմում են, որ Վարդանյանները գործունեություն են ծավալել 100-ից ավելի երկրներում:

Գևորգ և Գոհար Վարդանյանները այս համակարգում են 16 տարեկանից, ինչը շատ հազվադեպ է լինում: Սովորաբար սկսում են աշխատել 30-ից՝ անցնելով հատուկ նախապատրաստություն: Նրանց բազմամյա ղեկավար գեներալ Դորգոլովը իր գրքում գրում է, որ ամուսիններն արագ են յուրացրել ծրագիրը, այն, ինչի վրա մյուսները տարիներ են վատնում, նրանք յուրացրել են 2 ամսում: Վարդանյանները, որ, ի տարբերություն հետախույզների մեծօրյա սերնդի, ըստ էության, չեն անցել լիարժեք, ներկայումս տարիներ պահանջող հատուկ պատրաստվածություն, միայն եվրոպայում աշխատելիս գաղտնագերծել են ՆԱՏՕ-ի տասնյակ գաղտնի հենակայաններ, բարեկամական կապեր հաստատել տարբեր երկրների բարձրագույն պաշտոնյաների, պետական այրերի, այդ թվում և գեներալների, նախարարների, վարչապետների, նախագահների հետ: Նրանք հավաքագրել են մի քանի տասնյակ մարդու, անհավատալի մեծ թիվ՝ մասնագետների վկայությամբ: «Անլեզալ» (ծափոյալ) հետախուզություն Վարդանյան ամուսինների գումարային 118 տարին անցել է առանց գեթ մեկ ծախսուման:

Գևորգ Վարդանյանի գործընկերներից ոմանք նրա մասին գրել են. «Ձորգեին, Աբելին, Կիմ Ֆիլիբին հավասար: Իսկ, գուցե, առաջինը...»:

Վարդանյան ամուսիններին շնորհվել են նաև տարբեր պատվավոր կոչումներ: Վարդանյան ամուսինները նաև մեծ հայրենասերներ էին. «Ապրելով Պարսկաստանում՝ բոլորս պատրաստ էինք սնվել միայն ցամաք սև հացով, միայն թե ապրեինք Մայր Հայրենիքում մեր սիրելի Հայաստանում», - ասում են նրանք: «Հիշելով այն ծանր տարիները, - ասում է Մարտական կարմիր դրոշի և Հայրենական պատերազմի շքանշանակիր Գոհար Վարդանյանը, - իսկական երջանկության զգացում ես ապրում այն գիտակցումից, որ պետքական և օգտակար ես եղել Հայրենիքին, իսկ ժամանակը, վերափոխելով հիշողությունները, ջնջում է անցած տարիների դժվարությունները: Ես ինձ շատ երջանիկ եմ համարում, որ ամուսնունս հետ միասին ամբողջ կյանքս աշխատեցի հետախուզությունում: Բոլորս ենք պարտք Հայրենիքին: Մենք բոլորս ոչինչ ենք առանց նրա: Պետք է հեռու լինել նրանից, որպեսզի հասկանալ, թե ի՞նչ է

այն քեզ համար նշանակում»:

Վարդանյան ամուսինները հաճախ էին լինում իրենց հայրենիքում, որին և իրենց ժողովրդին կապված էին հոգու թելերով: Գևորգ Վարդանյանը միշտ ուզում էր, որ իր ժողովուրդը լավ ապրի, մարդկանց երևանի փողոցներում ժպտերես տեսնի: Շատ էր ուրախանում Հայաստանի նվաճումներով: Չնայած պատկառելի տարիքին՝ ոտքով շատ էր զբոսնում երևանով մեկ, ժամերով մայրում շենքերին, շինարարությանը, անկեղծ հետաքրքրությամբ հարցուփորձ անում մարդկանց, ուրախանում ամեն մի, անգամ աննշան լավ բանով, որ տեղի էր ունենում իր պատմական հայրենիքում:

Հակահետախուզության վետերան, անկախ Հայաստանի ազգային անվտանգության ծառայության հակահետախու-

որ ձևով կանխելու կամ, գոնե, դրանց ողբերգական հետևանքները մեղմելու համար:

«Մեզ՝ բոլոր հայերիս, պետք է համախմբվել՝ հաջողության հասնելու համար: Չէ՞ որ, ինչպես ասում են, աշխարհում ընդամենը մի բուռ հայ ենք, այն էլ աշխարհասփյուռ: Եվ պետք է վերջ տալ ինչ-ինչ «բաժանարար» գծեր անցկացնելուն՝ երևանցի, դարաբաղցի, լիբանանցի, ռուսաստանցի և այլ հայերի միջև: Մենք բոլորս պարզապես ՀԱՀ ենք: Նրանց բոլորին (սփյուռքահայ հայրենակիցներին) կարող է և պետք է միավորի իրենց մահմիների Հայրենիքը՝ Մայր Հայաստանը», - ասում էր մեծ հայրը:

Ի պատասխան լրագրող Գուրգեն Խաժակյանի այն հարցին, թե ինչն է մաբացատրում այն պայծառ հետքը, որ մեր հայրենակիցները թողել են հետախու-



զության զլխավոր վարչության առաջին պետ, պաշտոնաթող գնդապետ Գեորգի Ավետիսյանը հիշում է, որ երբ վերջապես ավարտվեց դեռ խորհրդային տարիներին սկսված Սևան-Դիլիջան թունելի շինարարությունը, իրենք Գևորգ Վարդանյանի հետ գնացին՝ հատուկ այն տեսնելու: Նույնը Դավիթաշենի կամրջի դեպքում:

Վարդանյան ամուսինները Հայաստանում բազմաթիվ հանդիպումներ են ունեցել մի շարք բուհերի ու դպրոցների սովորողների հետ: 2011 թ. հոկտեմբերի 5-ին Անանիա Շիրակացու անվան ճեմարանում Գևորգ Վարդանյանը որպես «պատվավոր ճեմարանցի» մասնակցել է ուսուցչի օրվան նվիրված հանդիսավոր միջոցառմանը. մի հատված նրա ելույթից. «...Խորին շնորհակալությունս եմ հայտնում ուսուցիչներին, որոնց առջև ես միշտ իմ մանուկ հասակից մինչև հիմա, խոնարհվել եմ, որովհետև կյանքում ինչ հաջողության որ հասել եմ, այդ բոլորը հնարավոր է դարձել, առաջին հերթին, այն գիտելիքների շնորհիվ, որոնց իմնքը դրել եմ ուսուցիչները:

Կրկին անգամ շնորհակալություն, և շնորհավորում եմ բոլոր ուսուցիչներին, որոնց գործն ամենապատվավորն է»: Նա և տիկին Գոհարը միշտ պատրաստ էին կիսելու իրենց հարուստ փորձը՝ համուն հայրենիքի բարգավաճման: Արցախյան ազատագրական պատերազմի դժնդակ տարիներին հետախուզության առասպելներից մեկը մայր հայրենիքի հետ էր. տալիս էր արժեքավոր խորհուրդներ, աջակցում ու նպաստում նորանկախ երկրի արտաքին հետախուզության ծառայության կապեմանն ու զորացմանը: Գևորգ Վարդանյանի սաներից մեկի վկայությամբ՝ երբ Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին/ամիսներին Գետաշենում, Շահումյանում, Արցախ աշխարհի մյուս բնակավայրերում տեղի էին ունենում այնպիսի ողբերգական դեպքեր, ինչ-պիսի էր, օրինակ, տխրահռչակ «Օղակ» («Кольцо») գործողությունը, Գևորգ Վարդանյանը ջանք չէր խնայում դրանք ինչ-

զության պատմության մեջ, Գևորգ Վարդանյանն ասում է. «Նախ և առաջ դա ես բացատրում եմ նրանով, որ հայերն իրենց խառնվածքով շատ նվիրված մարդիկ են: Եթե նրանք նվիրված են ինչ-որ մի բանի կամ ինչ-որ մի մարդու, ապա երբեք ծանր կացության մեջ չեն դնի: Ուստի հայերին միշտ վստահել եմ, որովհետև նրանք միշտ ազնվորեն և մաքուր են ծառայել ԽՍՀՄ-ին, Ռուսաստանին: Եվ հետո բոլորին էլ աշխարհումս հայտնի է, որ մեր ազգը խելքի և լեզվական ընդունակությունների պակաս բնավ չունի»:

Մի առիթով Գևորգ Վարդանյանը իրեն նվիրված գրքի հեղինակ Նիկոլայ Դուգոպոլովին ասել է. «Մենք՝ ես ու Գոհարը, հայ ենք: Եվ հպարտանում ենք մեր տաղանդավոր ժողովրդով: Ընդամենը, բարի ու հյուրասեր»:

Հետախուզության պատմության մեջ առասպելացած զույգի մասին Հայաստանում ու արտերկրում գրվել են գրքեր (Գուրգեն Խաժակյան. «ՀՊՈՒՍԸ ԼԵԳԵՆ-ԴԻՆ. ծափոյալ հետախույզներ Գևորգ և Գոհար Վարդանյաններ» (Զուսերեն, Երևան, 2010 թ.), նույնի, «Հերոս անլեզալ (ծափոյալ) հետախույզներ Գևորգ և Գոհար Վարդանյաններ. «ՀՊՈՒՍԸ ԼԵԳԵՆ-ԴԻՆ», Երևան, 2011, նույնի, «Հերոս ծափոյալ հետախույզներ Գևորգ և Գոհար Վարդանյաններ. ԱՆՄԱՀ ԼԵ-ԳԵՆ-Դ», Երևան, 2014, Նիկոլայ Դուգոպոլով, «Վարդանյան», Երևան, 2015, որոնցից էլ մեծապես օգտվել ենք այս ակնարկը գրելիս), բազմաթիվ հոդվածներ, նկարահանվել վավերագրական ֆիլմեր ու հաղորդումներ:

Հայրենիքը, իհարկե, չի մոռանում իր մեծ զավակներին. 2014 թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը սահմանեց «Գևորգ Վարդանյան» գերատեսչական մեդալ՝ լավագույն հետախույզներին պարգևատրելու համար: Առաջին մեդալը հանդիսավոր պայմաններում շնորհվեց հետախույզի այրուն՝ Գոհար Վարդանյանին:

**Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների  
թեկնածու

Լրացավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Պարոթ Բագրատի Ղարիբջանյանի ծննդյան 100-ամյակը:

Ծնվել է 1920 թ. մայիսի 5-ին Ալեքսանդրապոլ քաղաքում (հետագայում՝ Լենինական, այժմ՝ Գյումրի)՝ մանկավարժ, հրապարակախոս, բոլշևիկ, Մայիսյան ապստամբության ղեկավարներից Բագրատ Ղարիբջանյանի ընտանիքում: 1937 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) պատմության ֆակուլտետ: 1941-ի հուլիսին ԵՊՀ-ի չորրորդ կուրսի գերազանցիկ, Ստալինյան թոշակառու ուսանողը կամավոր մեկնել է բանակ: Պատերազմի ավարտից հետո ծառայել է 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթում: Այդ ընթացքում զուգահեռաբար սովորել է ԵՊՀ-ում, ընդունվել ասպիրանտուրա: Գ. Ղարիբջանյանը գորագրվել է 1948-ի սեպտեմբերին:

## ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆ ՈՒ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

(Գ. Բ. Ղարիբջանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ասպիրանտուրան ավարտելուց հետո Գ. Ղարիբջանյանը 1948 թ. պաշտպանում է թեկնածուական, իսկ 1955-ին՝ դոկտորական ատենախոսություն՝ «Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում» թեմայով, որը նույն թվականին հրատարակում է հայերեն և ռուսերեն:

Գ. Ղարիբջանյանին 1957 թ. շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971-ին՝ ակադեմիկոս: 1977–1982 թթ. Գ. Ղարիբջանյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ապա Պատմության ինստիտուտի Հայ հասարակական մտքի և մամուլի պատմության բաժնի վարիչ: 1985 թ. մինչև 1999 թ. ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության կենտրոնը: 1965–1976 թթ. եղել է ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ կրթության մինիստրությանն առընթեր բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի անդամ: Գիտական-հետազոտական աշխատանքներին զուգահեռ ծավալել է գիտամանկավարժական գործունեություն. 1947–1999 թթ. դասախոսել է ԵՊՀ-ում և այլ բուհերում:

Գիտամանկավարժական աշխատանքը Գ. Ղարիբջանյանը հաջողությամբ զուգակցել է կուսակցական ու պետական պաշտոնների հետ: 1948–1950 թթ. եղել է Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար, 1951–1954 թթ.՝ ԽՍՀՄ Կենտկոմի առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի ԽՍՀՄ պատմության սեկտորի վարիչ, 1968–1977 թթ.՝ նույն մասնաճյուղի տնօրեն: 1954–1961 թթ. Գ. Ղարիբջանյանը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի, գիտության, կուլտուրայի և ուսումնական հաստատությունների բաժինների վարիչի տեղակալ էր, դպրոցական բաժնի վարիչ: Ավելի քան յոթ տարի՝ 1961–1968 թթ., եղել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար: Ընտրվել է ԽՍՀՄ XXII և XXIII համագումարների պատգամավոր, ԽՍՀՄ VI–VII, ՀԽՍՀ VIII–IX գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր, 1954–1981 թթ.՝ ՀԿԿ ԿԿ անդամ, 1966–1969 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու:

Իսկապես, զարմանալ կարելի է, թե նման պատասխանատու պաշտոններում գտնվելով, ինչպես է Գ. Ղարիբջանյանը կարողացել գրել ու տպագրել 75 գիրք ու գրքույկ, շուրջ 400 գիտական, հրապարակախոսական, հուշագրական և գրական հոդվածներ:

Բազմիցս գրվել է, որ Գ. Ղարիբջանյանը, ապրելով խորհրդային իշխանության տարիներին, իր գիտական հետաքր-

քությունների դաշտ է բերել թեմաներ ու խնդիրներ, որոնցից մի մասն այսօր վերանայվում և վերաթերևորվում է, սակայն չի կորցնում գիտական արժեքը: Քանզի գրելով աշխատություններ Անդրկովկասում հեղափոխական շարժումների մասին, պատմաբանը երբեք կուլ չգնաց գիտական ու գաղափարախոսական կաշկանդումներին, մշտապես հայացք հառեց ազգային-ազատագրական պայքարին՝ դրանք հաճախ զուգադրելով հեղափոխական շարժումներին: Դրանով իսկ Գ. Ղարիբջանյանը խորհրդային պատմագիտության մեջ ձևավորեց մի նոր գիտական հայեցողություն, ըստ որի՝ հեղափոխական շարժումներն ու ազգային-ազատագրական պայքարը շատ հաճախ ունեին նույն խնդիրները, նույն ենթատեքստերը:

Գ. Ղարիբջանյանը բարձրաձայնում էր ազգային-ազատագրության մասին [«Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» (1986 թ.)],



իր աշխատություններում ներկայացնում ազգային գործիչների, որոնց անունները արգելքի տակ էին: 1989-ին գրելով բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մասին («Ալ-մարկներ հայ-բուլղարական բարեկամության պատմության»՝ ակադեմիկոսն այդ շարժումը միջոց էր դարձրել անդրադարձ կատարելու Անդրանիկ Օզանյանին, ներկայացնելու մեր ժողովրդի պատմության մեջ հիրավի եզակի ժողովրդական առաջնորդին: Ուսումնասիրվող նյութի քաջ իմացության հետ մեկտեղ՝ Գ. Ղարիբջանյանը խորհրդանշում էր նաև գիտական խիզախությունը: Հենց դա էլ նրան տարավ մի շարք թեմաների հետազոտմանը, ազգային խնդիրների կարևորմանը: Չնոռանանք Գ. Ղարիբջանյանի համարձակ ու անաչառ մոտեցումները մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող, Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի ԻԽՍՀ-ն և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանին 1966 թ. նոյեմբերի 12-ին ուղղած գրությունը՝ ԽՍՀՄ Կենտկոմ ուղարկվելիք տեղեկանքի կապակցությամբ:

Ղեկավարելով ԳԱ հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության կենտրոնը՝ Գ. Ղարիբջանյանը լայնածավալ աշխատանք է կատարել հայագիտության բնագավառում:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պատմաբանին հետաքրքրել են XIX դարավերջը և XX դարասկիզբը, մեր պատմության բարդագույն շրջանները, որոնք դժվարին տարիներ էին քաղաքական ու կուսակցական խնդրումներով, գաղափարախոսական հակասություններով: Ղարիբջանյանի բոլոր կենսագիրները նշել են, որ նա պատմության ու պատմականությանն անդրադառնում էր յուրովի՝ հավատարիմ մնալով պատմական իրողություններին, միաժամանակ ներկայացնում իր սեփական մեկնաբանությունները՝ համադրականության շնորհիվ հասնում պատմաշրջանի ամբողջական ընկալմանը:

Գ. Ղարիբջանյանը մի քանի առիթներով գիտական հետաքրքրությունների կենտրոն է բերել զորավար Անդրանիկ Օզանյանին: Նրա հանդեպ սերն այնքան մեծ էր, որ, լինելով Լենինականի կուսբաղկոմի առաջին քարտուղար, Հայաստանում առաջին անգամ փողոց անվանակոչեց մեծ գորավարի անունով՝ Ա. Օզանյան՝ չվախենալով ասեկոսեներին ու հետապնդումներին: Ընդ որում, այդ փողոցը ձգվում էր դեպի հայ-թուրքական սահման՝ դեպի Կարս: Անդրանիկի կյանքն ու գործն ակադեմիկոսի համար յուրատեսակ գիտական հավատամք դարձան. 1990 թ. հրատարակեց «Ժողո-

վրդական հերոս Անդրանիկը» մեմագրությունը, երբ ձևավորվում էր մի նոր ազգային-ազատագրական պայքար՝ Ղարաբաղյան շարժումը: Եվ Ղարիբջանյանի աշխատությունը, որը նաև լույս տեսավ ռուսերեն, պատմության ու ներկայի ինքնատիպ զուգակցումն էր. այդ գրքի միջոցով բացահայտվում էին պատմական այնպիսի իրողություններ, որոնք նպաստում էին նաև Ղարաբաղյան հիմնահարցի ամբողջական ընկալմանը: Ի դեպ, անուրանալի է Գ. Ղարիբջանյանի ջանքերը «Զորավար Անդրանիկ» հայոց համազգային միության ստեղծման գործում:

Ազգային պետության գլխավոր հիմնախնդիրներից մեկը՝ Ցեղասպանության ճանաչումը, նրա համար սոսկ կոչ ու կարգախոս չէր, ըստ այդմ՝ մի շարք աշխատություններ նվիրեց մարդկության դեմ գործված մեծագույն ոճիրներից մեկին և Ցեղասպանության իրողության արժևորումը գիտական շրջանառության մեջ դրեց օտարազգի մտավորականների գնահատումներով, նրանց հաղորդած տեղեկությունների հետազոտմամբ [«Հայոց ցեղասպանությունը և համաշխարհային հասարակայնությունը» (ռուսերեն, 1989 թ.), «Հայոց ցեղասպանությունը պատմության դատաստանի առաջ» (ռուսերեն, 1996 թ.)]:

Գ. Ղարիբջանյանի գիտական ահեղի կենսագրությանը համարվել է նաև աշխատանքային հարուստ կենսագրությունը, որի ամենապայծառ ու հագեցած շրջանն առնչվում է Լենինական-Գյումրիում, երբ 1960-ականներին եղավ իր ծննդավայր քաղաքի ղեկավարը, նրա վերաշինության նախաձեռնողը:

Գ. Ղարիբջանյան գիտնական անձի, քաղաքացու, հայի, մարդ-անհատականության դիմանկարն անկատար կլիներ, եթե չհիշատակեինք մի կարևորագույն փաստ. հայտնի իրողություն է, որ նաև նրա ջանքերի շնորհիվ 1990-ականների սկզբին հիմնավորվեց Գիտությունների ակադեմիայի պահպանման անհրաժեշտությունը:

Հատուկ ուզում ենք ընդգծել Գ. Ղարիբջանյանի կողմնորոշումը. այն է՝ հայ ժողովուրդն ունեցել է և ունի մշտական ու հուսալի բարեկամ՝ ի դեմս ռուս մեծ ժողովրդի: Լինելով այդ տարիներին ծնունդ առած «Ռուսաստանի բարեկամներ» հասարակական կազմակերպության հիմնադիրներից մեկը՝ կարողացավ կամուրջ դառնալ նորանկախ Հայաստանի և Ռուսաստանի գիտնականների, մտավորականների հետ համագործակցության, բարեկամական կապերի ամրապնդման գործում:

Գ. Ղարիբջանյանը մեծ ճանաչում ուներ Խորհրդային Միությունում. նրա հետ մարդկային սերտ հարաբերություններ էին հաստատել ինչպես հայ, այնպես էլ ռուս նշանավոր գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, ռազմական ու պետական գործիչներ:

Ականավոր գիտնականը ճանաչված ու անխոնջ հասարակական գործիչ էր՝ ժուռնալիստների և Գրողների միությունների, Հայրենական մեծ պատերազմի վետերանների միության նախագահության անդամ, Սովետահունգարական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի հիմնադիր և անփոփոխ նախագահ, «Գիտելիք» ընկերության նախագահության ու ԽՍՀՄ Փիլիսոփայական ընկերության անդամ:

Հայրենիքը բարձր է գնահատել Գ. Ղարիբջանյանի գործունեությունը. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գործում ցուցաբերած խիզախության, մարտական ու աշխատանքային ծառայությունների համար փոխգնդապետը պարգևատրվել է 30 շքանշանով ու մեդալներով, այդ թվում՝ «Հայրենական պատերազմի II աստիճանի» շքանշանով, 2 անգամ արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան», «Ժողովուրդների բարեկամության» շքանշանների:

Ավելացնենք. Գ. Ղարիբջանյանը լայնախոհ մտավորական էր, կյանքի մարդ, մեծ հումորի տեր, պարզ ու հասարակ, անկեղծ և անմիջական, բարյացական անձնավորություն:

Մեծանուն գիտնականն ու ազգային-պետական գործիչը վախճանվեց 1999 թ. դեկտեմբերին:

Գևորգ Բագրատի Ղարիբջանյանին բնորոշ էր հավատարմությունը դավանած գաղափարներին, քաղաքական և բարոյական այն սկզբունքներին, որով ապրել ու գործել է:

**ՍՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ**  
**«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր**



## ԵՐԵՎԱՆՑԻ ՈՒՍԱՆՈՂԸ՝ ԱԹԵՆՔՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆՓՆԵՆԻՐ

Սևան Ղարիբյանը, որն ուսանում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական բաժնի 4-րդ կուրսում (Վարդան Աճեմյանի դասարան) դափնեկիր է դարձել վերջերս Աթենքում ,An Art Artisty-ե կազմակերպության անցկացրած «Ժամանակակից դաշնամուրը» միջազգային ստեղծագործական մրցույթում: Նա հաղթող է ճանաչվել դաշնամուրի համար գրված «Երեք փերիներ» ստեղծագործության համար: Մրցույթին հայտ էին ներկայացրել 37 կոմպոզիտոր 20 երկրից: Որպես մրցանակ ժյուրիի կազմում ընդգրկված դաշնակահարները կատարելու են Ղարիբյանի ստեղծագործությունը, որի տեսածայնագրութ-

յունը թողարկվելու է «An Art Artisty»-ի թվային հարթակներում: Սևան Ղարիբյանի մասին պատմող էջն արդեն տեղադրվել է աթենյան մշակութային կենտրոնի կայքում՝ an-art.com/en/portfolio/seghe/:

Մինչ այդ, փետրվարին, ԱՄՆ-ի Տեխաս նահանգի Օսթին քաղաքում կայացած «Գոլդեն Դորմեթ 21-րդ դարի կոմպոզիտորների լաբորատորիայի» լարային քառյակի VI միջազգային կոմպոզիտորական մրցույթում 200 հայտի մեջ եզրափակիչ փուլ է հասել Ղարիբյանի՝ լարային քառյակի համար գրված «Մայրիներ» ստեղծագործությունը: Մրցանակն ամերիկյան «Ինվոք» լարային քառյակի կատարմամբ բարձրա-

կարգ ծայնագրությունն ու սկավառակի թողարկումն է, ինչպես նաև տարածումը թվային հարթակներում:

Սևան Ղարիբյանը լիբանանահայ էր և հայաստանցի մոր զավակ է: Նախնական մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում և Բեյրութի Համազգայինի Կանաչյանի անվան և Բախի անվան երաժշտական դպրոցներում: Նա նաև գրում է բանաստեղծություններ, ինչպես արևելահայերեն ու արևմտահայերեն, այնպես էլ անգլերեն և ֆրանսերեն: Զուգահեռ սովորում է նաև Լոնդոնի համալսարանի կառավարման և թվային մոդարարության բաժնում:

Ղևոնդ Ալիշանի հսկայածավալ ու բազմաբնույթ գրական, պատմական, աշխարհագրական, բանասիրական, հայագիտական ու թարգմանական ժառանգության մեջ իրենց ուշագրավ տեղն ունեն այլ լեզուներով անգլերենով, ֆրանսերենով ու իտալերենով գրված գործերը: Դրանց մեջ առաջինը անգլերենով ու հայերենով լույս տեսած «Armenian Popular songs» ժողովածուն է, որի համառոտ նախաբանը և ծանոթագրությունները միայն անգլերենով են՝ այդ լեզվով ընթերցողների համար: Ժողովածուում հավաքված են հայ ժողովրդական բանաստեղծության այն ընտիր նմուշները, որոնք մեր իմաստուն գրիչները արտագրել ու զետեղել են հայկական ձեռագրերում՝ փրկելով դրանք կորստից: Այս առումով Ալիշանը շարունակել է այն ընդհանուր գործը, որն սկսել էր հաջատուր Արովյանը: Այդ բանահյուսական երգերն ունեն պատմական ու գեղար-

1849-51 թթ., միաժամանակ Վենետիկի Ռաֆայելյան ու Փարիզի Մուրադյան վարժարաններում վարել է տեսչի պաշտոնը:

Ալիշանի ողջ ստեղծագործությունը՝ գրական ու գիտական, ներծծված է անսահման հայրենասիրությամբ և ազգային-ազատագրական գաղափարներով: Այդ նույն ոգով էլ նա աշխատել է որպես մանկավարժ: Մեծ հայագետի կենսագրությունից իմանում ենք, որ նրան շատ բարձր են գնահատել Վենետիկի Մխիթարյան հայրերը: Երբ «Բազմավեպի» խմբագիր Գաբրիել Այվազովսկին մեկնում է Փարիզի Մուրադյան վարժարան, «Բազմավեպի» խմբագրի պաշտոնը սիրով հանձնում է Ալիշանին: Ֆրանսիացի երևելի ուսույալ դեմքերը, հաճախելով վարժարան, հիանում էին Ալիշան մանկավարժով, որը Հայաստանը որպես հրաշակերտ երկիր, իսկ հայերին՝ հանճարեղ ազգ էր ներկայացնում ու այդ մասին հաճախ խոսում էր իր ֆրան-



Հետևելով Մովսես Խորենացուն՝ Ալիշանը հայերի հնագույն պատմության հայտնաբերող համարում է ասորի Սար Աբասին: Տիգրան Մեծը Հունաստանից տեղափոխում է հունական աստվածների արձաններ ու հատում է հունական շրջագրով դրանք: Նա իր արքունիքում հավաքում է հույն գիտնականներ, և նրանցից մեկը դեռ Տիգրանի կենդանության ժամանակ գրում է Տիգրանի պատմությունը: Նա իր որդուն՝ Արտավազդին, տալիս է հունական կրթություն և վերջինս Սոֆոկլեսի ու Էվրիպիդեսի օրինակով գրում է ողբերգություններ: Մեր թվարկության առաջին դարում Հայաստանն ընկնում է Հռոմի գերիշխանության տակ: Հռոմեացիներին հետաքրքրում էին Հայաստանի ընդերքի հանածոները, քաղցրահամ մրգերը, որոնցից մեկը՝ ծիրանը, նրանք կոչեցին Prunus armeniaca, abricot, և այդ անվանումը պահպանվում է մինչև մեր օրերը: Կարծում են նաև, թե Հռոմի պատմության առաջին հեղինակը՝ Տիրանիոն (Tyranio) եղել է Լուկուլլոսի գերիներից հայազգի Տիրանը՝ անուն, որ մինչև օրս գործածական է հայերի մոտ: Նա միաժամանակ Կիկերոնի մտերիմն էր:

Մինչև Մաշտոցը հայերն օգտվել են ասորական, հունական, պարսկական գրերից: Պարսկաստանում Արշակունիների գերդաստանին փոխարինում է Սասանյանը, որը վերադառնում է մոզերի հին կրոնին և կամենում է Հայաստանն էլ դարձնել զրադաշտական կրոնի երկիր: Տրդատ I-ը վերադառնում է աքսորից, երկար փորձություններից հետո ազգայինը վերականգնում է Հայաստանում ու 40 տարի երջանկորեն թագավորում: Քրիստոնեությունը դեռ Հիսուսի ժամանակներում պաշտում էր Եղեսիայի հայ արքա Աբգարը, որը նամակագրական կապի մեջ էր Հիսուսի հետ և նրա առաքյալի՝ Թադևոսի ձեռքով մկրտվում է ու դառնում քրիստոնյա: Հետո քրիստոնեությունը Հայաստանում տարածում է Հիսուսի մյուս առաքյալը՝ Բարդուղիմեոսը:

Ներկայացվում է Տրդատ Երրորդի ժամանակահատվածը, Հռիփսիմյան կույսերի՝ Հռոմի կայսր Դիոկղետիանոսից փախչելն ու Հայաստան գալը, նրանց նահատակվելն ու Գրիգոր Լուսավորչի ձեռքով ողջ Հայաստանի քրիստոնեացումը: Հայաստան են բերվում հույն և ասորի 400 եպիսկոպոսներ, որոնք հունարեն ու ասորերեն լեզուներով սովորեցնում են նոր կրոնը:

Գրիգոր Լուսավորչի թոռ Սահակ Պարթևը և վարդապետ Մեսրոպ Մաշտոցը ու Վռամշապուհ արքան մտահոգվում են ազգային գրերը ստեղծելու համար: Մաշտոցը ստեղծում է հայոց այբուբենը V դարի սկզբին և իր աշակերտների հետ սկսում է հայերենի թարգմանել Լուսավառչունը ու սուրբ հայրերի գրեթե բոլոր գործերը:

Մաշտոցի աշակերտները, որոնք հետո դարձան հմուտ թարգմանիչներ, կրթվել էին Աթենքի, Ալեքսանդրիայի, Եդեսիայի, Կոստանդնուպոլսի, Հռոմի նշանավոր դպրոցներում ու գրադարաններում:

Նրանք կատարել են այնպիսի թարգմանություններ, որոնց հունարեն բնագրերը կորել են, սակայն պահպանվել են հայերեն թարգմանությունները՝ Եվսեբիոսի ժամանակագրությունը (Chronique d'Eusèbe), Փիլոն Եբրայեցու (Philon l'Hebreu) գործերը, Սեբրիանոսի հիմները (les homilies de Sevrorien) և այլն: Հինգերորդ դարը համարվում է հայ գրականության ոսկեդարը:

**Ալեխտա ԴՈԼՈՒՄԱՆՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,**  
**բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

## Ղևոնդ Ալիշանի ֆրանսերեն ճառը՝ նվիրված Հայաստանի պատմությանն ու գրականությանը ՆԱԻԲԱՌԻԱ Է ՂԱՌԱՌ ԱԼԻՇԱՆԻ ԺԱՆՈՅԱՆ 200-ԱՄյԱԿԻՆ

վեստական մեծ արժեք: Դրանցից են «Ի Լեոն որդի Հեթոնյ Ա» (On Leo son of Haiton I), «Ողբ Ջուրայեցոց» (The Armenians in their emigration from Old Giulf), երգ արագիլի (To the stork), Մանուկն և ջուրն (The yangman and the water) և այլն: Դրանք հետագայում մշակվեցին հայ դասական գրողների՝ Ղ. Աղայանի ու Հ. Թումանյանի կողմից:

Ղևոնդ Ալիշանի մահվանից հետո Վենետիկի Մխիթարյան Միաբանությունը հրատարակել է մեծարժեք մի մատենագիտություն, որն անվանել է «Ալիշանեան մատենագրարան»: Այն բաղկացած է հինգ բաժիններից՝ «Բանաստեղծականք», «Մատենագրականք», «Աշխարհագրականք եւ պատմականք», «Բանասիրականք» և վերջինը՝ «Կրոնականք»:

«Աշխարհագրականք եւ պատմականք» բաժնում են զետեղված Ալիշանի օտարալեզու գրքերը՝

ա) Tableau succinte de l'histoire et de la litterature l'Arménie, discours en français, Venise, 1869

բ) Physiographie de l'Arménie, en français, Venise, 1860

գ) Elia d'Alessandro, Venezia, 1876

դ) Laboubnia, auteur syrien, contemporain des Apotres, Lettres du Roi Abgar, ou Histoire de la conversion des Edessenes, traduit en français avec plusieurs notes, Venise, 1868

ե) Sissouan ou l'Arménie-Cilicie, description géographique et historique, avec carte et illustrations, traduit du texte arménien, Venise, 1899

Այս ցանկի մեջ մեզ հետաքրքրողը «Tableau succint de l'histoire et de la littérature Arménienne» զեկուցումն է, որն Ալիշանը կարդացել է 1859-ին Սամվել Մուրադյան վարժարանի հանդիսության ժամանակ: Այդ ընդարձակ զեկուցումը նվիրված է ծագումով եվդոկացի մեծահարուստ Սամվել Մուրադյանին, որի կտակի համաձայն բացվել է վարժարանը՝ դառնալով ապագա հայագետների հիմնալի դպրոց:

Սամվել Մուրադյան վարժարանը հիմնադրվել է 1832-ին Իտալիայի Պադուա քաղաքում, 1846-ին տեղափոխվել է Փարիզ: Այդ վարժարանում Ալիշանն աշխատել է

սերեն ճառերում:

Մեկ այլ հայրենասեր գործիչ՝ Գրիգոր Արծրունին, որն ամձամբ ճանաչում էր Ալիշանին, գրում է. «Հայր Ղևոնդ հայտնի է բոլոր հայերին, ամբողջ մարդկությանը՝ որպես գրող և բանաստեղծ... Բայց գուցե շատերը չգիտեն, որ Ալիշանը խելացի մանկավարժ էլ է: Մայրենի լեզուն նրա ձեռքով դեկավարած դպրոցի ուսումնեցների ոգին էր...»:

Ալիշանի վերջին սովորածավալ աշխատությունը «Հայապատումն» էր, որի խորագիրը խիստ խոսում է: Այս գրքում հայագետն ի մի է բերել ոսկեդարից մինչև XVIII դարն ընկած ժամանակահատվածի հայ պատմիչների, հայ մատենագիրների, Հայաստանի վերաբերող փաստերի, հայ բանաստեղծների, ժողովրդական բանահյուսության մյուսների հսկայական շտեմարան, որը փաստացի ներկայացնում է Հայաստանի անցած դժվարին, սակայն փառապանծ գործերով ու խիզախումներով զարդարուն ուղին և նրա նշանավոր դեմքերին:

Երբ համեմատում ենք «Հայապատումը» 1859-ի Մուրադյան վարժարանի հանդիսության ժամանակ կարդացած զեկուցման հետ, ակնհայտ է դառնում հայագետի ասելիքի նույնականությունն ու ազնիվ նպատակը:

Ալիշանն իր զեկուցում-ճառի սկզբում նշում է, թե մեկ տարի առաջ ինքը նույնատիպ ճառ է արտասանել՝ նվիրված հայ ազգի նախահոր՝ փառապանծ Հայկին: Իսկ հիմա հիշելու է մեկ ուրիշ մեծ հայի՝ Սամվել Մուրադյանի (Մուրադյանին):

Ալիշանը հիշում է, որ հարևան Գերմանիան մեծ շուքով նշում է դարակազմիկ բանաստեղծ Շիլլերի տարեդարձը: Սակայն հայերն ի վիճակի չեն ըստ պատշաճի նշել մի մեծ մարդու տարեդարձը, որը նպաստել է իր ազգի հանճարի առաջընթացին:

Խորին տխրությամբ նա խոսում է Հայաստանի երբեմնի մեծ տարածքների մասին, որոնց վրա դարերով ապրում էին հայերը: Մինչդեռ իր օրերում հայերը ցրվել են աշխարհում ավելի մեծ քանակով, քան աշխարհի որևէ այլ ժողովուրդ: Հայերը աշխարհի որևէ անկյունում էլ հայտնվում են, թողնում են իրենց հիշատակն ու հուշարձանները: Նա մեծ ցավով նշում է, թե հզոր կայսրությունները, որոնց հետաքրքրում է միայն նյութականը, վիճարկում են աշխար-

հի ժողովուրդների ճակատագրի շուրջ՝ մոռանալով մարդասիրության զգացմունքը: Այս տողերը կարծես գրված են այսօր: Նա մի առանձին երախտագիտությամբ է խոսում փառապանծ ու վեհ Ֆրանսիայի մասին, որը բարեհոգ ընդունել է հայերին: Եվ Մուրադ վարժարանը, որն ավանդել է Մուրադն իր կտակով հայ ժողովրդին, հիմա հիշում է այդ մեծ հային այս հավաքի ժամանակ, որին մասնակցում են և՛ հայեր, և՛ ֆրանսիացիներ:

Ալիշանը հայերի բնօրրանը համարում է դրախտ, ուր հոսում են դրախտի գետերը, և եղել է նաև մարդկության բնօրրանը, մարդու քաղաքակրթության մտավոր առաջընթացի սկիզբը: Հնագույն ժողովուրդները՝ հրեաները, քաղդեացիները, մարդկության նոր զարգացումը կապում են Նոյի հետ, և դա կա ոչ միայն ազգերի բանավոր գրույցներում, այլև գրավոր աղբյուրներում:

Ալիշանի կարծիքով հայերն ունեցել են հին քաղաքակրթություն և ստեղծել են արվեստներ, բանաստեղծություն, տիեզերագիտություն, ավելի վաղ, քան դրանք զարգացան Եգիպտոսում, քաղդեացիների մոտ, Հունաստանում և Հնդկաստանում: Այդ հետքերը գտնում ենք մեր ժամանակագիրների, Աստվածաշնչի, տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ, ամենահին պատմիչների երկերում:

Հիսուս Քրիստոսի ծննդից առաջ՝ երկրորդ դարի միջին մասում, Հայաստանի պատմությունն սկսում է ավելի պայծառանալ, և հայ ժողովուրդը համաշխարհային պատմության մեջ խաղում է իր նշանակալի դերը: Հայաստանի սահմանները հասնում էին Կովկասյան լեռնաշղթայի այն կետերին, ուր Եվրոպան բաժանվում է Ասիայից:

500 տարվա ընթացքում այլ ժողովուրդների հետ ունեցած շփումների հետևանքով հայերի լեզուն կրել է փոփոխություններ, ձևափոխվել են նաև նրա տվողություններն ու պաշտամունքը: Տարբեր ազգերի աստվածությունների մեջ՝ հույների, ասորիների, պարսիկների, պարթևների և ուրիշների, հայերի համար առաջին տեղում է եղել Անահիտի պաշտամունքը, որին կոչել են բոլոր զգաստությունների մայր: Հայերը պաշտել են նաև Տիրին, որը գիտության և դպրության աստվածն էր:

## «Մեծ Ադրբեջանը» հավակնում է Կարսին ու Երևանին

Բաքվի Turan լրատվական գործակալությունը հանդես է եկել սենսացիոն նորությամբ: Մոտ ժամանակներ կարող է հայտարարվել տարագիր Արևմտյան Ադրբեջան (Իրևան) Հանրապետության՝ իռչակման մասին: Այդ մասին հայտարարել է թուրքական Կայսերիի (Կեսարիա) համալսարանի պրոֆեսոր Գաֆար Չախմազլին: Նրա խոսքերով՝ սկզբում կստեղծվի հանրապետության Ազգային խորհուրդ, այնուհետև կանցկացվեն խորհրդարանական ընտրություններ, և, վերջապես, կձևավորվի տարագիր կառավարություն:

Նրա խոսքերով՝ զվիավոր նպատակը բոլոր պատմական հողերի վերադարձն է՝ ներառյալ Երևանը, Ջանգեթասարը, Գոյջան, Ջանգեզուրը, Գյումրին, Դարալագյազը և Հայաստանի Հանրապետության տարածքում մնացող մյուս բոլոր հողերը:

Ինչ վերաբերում է Թուրքիային, այնտեղ խոսքը Կարսի և Երկրի հարավ-արևելքի մի քանի վիլայեթների մասին է, որտեղ, քրդական տարրի հետ մեկտեղ, նկատելի է ադրբեջանական էթնիկ տարրի ներկայություն:

Բացի դրանից, գոյություն ունեն նաև Արևմտյան Հայաստանի ու թուրքական Քրդստանի նախագծեր և դրանց իրականացման ծրագրեր:

Նշենք, որ Չախմազլին Կայսերիի Արջիյաս համալսարանում դասավանդել է հայերեն, ինչպես նաև Ադրբեջանի, Թուրքիայի և Հայաստանի նորագույն պատմությանը նվիրված մի շարք գրքերի ու հոդվածների հեղինակ է:

Նկատի ունենալով Վաշինգտոնի և Թեհրանի ներկայիս լարված փոխհարաբերությունները, տրամաբանական կլինեք ենթադրել ադրբեջանական խաղաքարտի կիրառում Իրանում, այլ ոչ թե Թուրքիայում: Ռուս փորձագետ

Ստանիսլավ Տարասովի կարծիքով, դա պայմանավորված է քրդական գործոնով և այն ենթադրություններով, թե Անկարան չի կարողանա իր վերահսկողության տակ պահել քրդերով բնակեցված հարավարևելյան որոշ վիլայեթներ:

Ադրբեջանցի քաղաքագետ Մուբարիզոմ Անեթոլուն ասել է. «Հայերի հետ հարկավոր է այսպես խոսել: Եթե մենք սկսենք նրանցից պահանջել Իրևանը (Երևան), Ջանգեզուրը և Թուրքիայում Կարսի մարզին սահմանակից մասերը, որոնք նույնպես պատմականորեն պատկանում են Ադրբեջանին, ապա նրանք կազատեն մեր գրավյալ տարածքները և Ջանգեզուրը: Իսկ մենք մեր հերթին նրանց կթողնենք Երևանը և այն մասերը, որոնք սահմանակից են Թուրքիայի Կարսի մարզին»:

**Արևիկ ԲԵՇԻՇՅԱՆ**  
**«ԱԶԳ»**



## Հայազգի գրողի վեպը՝ աղմուկի առարկա


Ապրիլին լույս տեսած հայազգի ռուսական փաստաբան և գրող Ռուբեն Մարգարյանի «Ֆոն Շիրախի դաշույնը» պատմական արկածային վեպն ամփոփապես գրավել է Գերմանիայի ուշադրությունը: Չնայած համավարակի ստեղծած իրավիճակին՝ գերմանացիները սպառնում են դատի տալ հրատարակչությանը և հեղինակին՝ պատմական փաստերն իբրև թե խեղաթյուրելու համար: Ռուբեն Մարգարյանին այս լուրն ուրախացրել է, ինչը նա համարում է գրքի համար լավագույն գովազդ: Վեպի գլխավոր հերոսը ռուս փաստաբան Արտյոմ Կախովսկին է: Պատմությունը կապված է «Հիտլերյունգեն» կազմակերպության առաջնորդ Բալդուր Ֆոն Շիրախի դաշույնի հետ:

Մարգարյանը ծնվել է 1968-ին, Տազանոզում: 1996 թվականին ավարտել է Մոսկվայի պետական իրավաբանական ակադեմիան: 1991-1992 ուսանել է Բեռլինի Բիզնեսի և կառավարման դպրոցում: Իրավագիտության թեկնածու է, Ռուսաստանի փաստաբանների և նոտարների ակադեմիայի պրոֆեսոր, Մոսկվայի հոգեբանության և սոցիոլոգիայի քրեական իրավունքի, քրեական դատավարության և քրեագիտության ամբիոնի դոցենտ: Ի թիվս

այլ գործերի, նա է պաշտպանել ՀՀ քաղաքացի Հրաչյա Հարությունյանին, որը մեղադրվել է ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու մեջ՝ խոշոր վթարի և 18 մարդու մահվան ելքով:

Մինչ «Ֆոն Շիրախի դաշույնը» Մարգարյանը հրատարակել է «Օրենքը և ես», «Երդկյալների դատարանը» իրավագիտական գրքերը, «Հիմնական արտահայտություն» վեպը, «Հանգստյան օրվա հեքիաթը՝ խնայիր ատամներդ, Վասյա» (հեքիաթ մեծերի համար) և «Եթե ձեր ետևից, այնուամենայնիվ, եկել են» (ծեռնարկ-խորհրդատվություն) հատորները:

**Ա. Բ.  
«ԱԶԳ»**



## ԾԻՇՏ ՄՆՎԵԼ

Օրերս աշխարհի գիտական մտքի լավագույն ներկայացուցիչները որոշել են 10 այն սննդատեսակները, որոնք մշտապես օգտագործելու պարագայում մարդը իրեն կզգա առույգ, առողջ և մանավանդ երիտասարդ:

Եվ այսպես, որո՞նք են այդ սննդատեսակները, որոնք հասանելի են բոլոր մահկանացուներին, և որոնք երաշխավորվում են որպես մշտական և անհրաժեշտ ուտելիք:

### Հաղաք

Պարունակում է մեծ քանակությամբ հակաօքսիդանտներ, որոնք օգնում են խուսափել կատարակտից, լայնացնում են արյունատար անոթները, կանխարգելում խոցերի, սիրտ-անոթային հիվանդությունների և քաղցկեղի առաջացումը:

### Համեմունքներ

Տարիքի հետ մարդու մեջ բթանում է համի զգացողությունը: Մարդիկ էլ գտել են ելքը, ուտելիքին չափից շատ աղ են ավելացնում՝ չիմանալով սակայն, որ աղը

բարձրացնում է արյան ճնշումը: Գիտնականները խորհուրդ են տալիս օգտագործել համեմունքներ, որոնք ոչ միայն համ են տալիս ուտելիքին, այլ նաև օգտակար են:

### Միտոք

Միտոքը կանխարգելում է քաղցկեղի և սիրտ-անոթային հիվանդությունների՝ ուղեղի կաթվածի վտանգը: Ունի հակաբորբոքային հատկություն, արտրիտների ժամանակ մեղմացնում է ցավերը:

Գիտնականները միաժամանակ նշել են մի քանի սննդատեսակներ, որոնք ընդհանրապես պետք է բացառել ամենօրյա սննդից: Դրանք են՝

- քաղցր և քաղցրավենիք: Դրանք մեծ կալորիականություն ունեն և ոչ մի օգտակար հատկություն,
- սպիրտային խմիչքներ: Նույնպես ունեն մեծ կալորիականություն և խանգարում են օրգանիզմին յուրացնել-մարսել վիտամինները,
- հագեցած յուղեր և ճարպեր: Սրանք բարձրացնում են խոլեստերինի մակարդակը և նպաստում են գիրանալուն:

## Ժողովուրդ



Սրճարան են մտնում ամուսիններ, փոքրիկ որդու հետ:

- Երկու կոնյակ, խնդրում եմ,- պատվիրում է հայրը:
- Իսկ դու ի՞նչ իմացար, որ մաման չի խմելու,- հետաքրքրվեց մանուկը:



Ուսանողական արձակուրդների օրերին հանդիպում են երկու ընկերներ: Մեկը.

- Դե, ինչպե՞ս ես համգատանում, ամուսնացա՞ր քո հրաշք Մոնիկայի հետ, թե՞ առաջվա նման դու ես քեզ համար ճաշ եփում:
- Եվ մեկը, և՛ մյուսը,- մռայլ պատասխանում է ընկերը:



- Հայրիկ, արի գնանք կրկես:
- Ժամանակ չունեն, տղաս:
- Ընկերներս, ասում եմ, որ հետաքրքիր համար կա՝ բոլորովին մերկ աղջիկը վագրին հեծած քշում է:
- Լավ, որ շատ ես ուզում գնանք, վաղուց վագր չեմ տեսել:



Հեռախոսի զանգ.

- Ալլո, լսում եմ:
- Ներեցեք, որ այսքան ուշ եմ զանգահարում:
- Չէ, ուշ չէ, դուք իզուր եք զանգահարել:



Հայրը և որդին շրջում են գազամանոցում: Հասնելով առյուծի վանդակին, տղան հարցնում է.

- Հայրիկ, եթե առյուծը ուտի մեզից մեկին, որ համարի ավտոբուսով պիտի տուն գնամ:



Էլեկտրաէներգիայի արտառոց գների պայմաններում մարդիկ, որ վախենում էին մութ ու ցուրտ տարիներից, հիմա սկսել են վախենալ լույսից:



Օդեսա: Հանդիպում են երկու ընկերուհիներ:

- Դու երեկ կայի՞ր Ֆիմայի և Սոֆիայի հարսանիքին:
- Գնացել էի, բայց շուտ դուրս եկա:
- Ինչո՞ւ:

- Փեսայի և հարսի մայրիկները բոլորովին չէին համապատասխանում իրար:



Վագոնի ուղեկցորդուհին հերթով մտնում է խցիկները և հարցնում.

- Ձեր մեջ արտասահմանցիներ կա՞ն:
- Բոլոր վագոնախցերում ստանալով «ոչ» պատասխանը, վագոնով մեկ գոռում է.
- Կոշ, էստեղ մեմակ մերոնք են, անջատիր օդափոխիչները:



Երիտասարդը՝ ընկերոջը.

- Լսի, ծանոթացել եմ մի աղջկա հետ, սակայն ծնողները դեմ են մեր երջանկությանը: Պահանջում են, որ ես ամուսնանամ իրենց աղջկա հետ:



- Ինչպե՞ս համոզել կնոջը շարունակել ճանապարհն այն բանից հետո, երբ առջևով սև կատու է անցել:
- Իմ կարծիքով ավելի հեշտ է կատվին համոզել, որ հետ դառնա:



Կինը՝ ամուսնուն.

- Գիտես, թանկագինս, իմ ամբողջ կյանքի ընթացքում ընդամենը երկու իսկական տղամարդու եմ հանդիպել:
- Իսկ ո՞վ էր երկրորդը:
- Քո ինչին է պետք: Դու առաջինին էլ չգիտես:



Օդեսայի շուկայում.

- Այս ինչ այլանդակ վարունգներ են, մի՞թե սրանք կարելի է ուտել:
- Տիկին, ես ձեր արտաքինի մասին ոչինչ չեմ ասում, թեև ասելիք ինչքան ուզես:



Տրանսգենային ճարտարագիտության նորություններից.

- Ճապոնացի գիտնականները խաչածնել են թութակը շաքարեղեգի հետ: Հիմա շաքարը հուշում է, թե քանի գդալ շաքար զցել թեյի բաժակի մեջ:

## ՄԵՐ, ՏՈՒԳԱՆՔ ԵՎ ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՌԵՆՈ

Դպրոցում մի ուսուցիչ ունեի, որը միշտ պատժում էր ծածուկ գործելու համար: Մի անգամ էլ անկյուն կանգնեցրեց մեր դասարանի Հայկին, որովհետև տղան թաքուն սիրային նամակ էր նետել Արուսիկի պայուսակի մեջ: Հետո ուսուցիչս հայտարարեց, որ ծածուկ գործուներությունը հատուկ է հանցագործներին, ու եթե մենք մեծանա՞նք՝ կիմանանք, որ, օրինակ, ոստիկանը երբեք ծածուկ չի գործում:

Չգիտեմ՝ ի՞նչ է հիմա մտածում այդ ուսուցիչս, բայց ոստիկանությունը Հայաստանի ճանապարհներին որոշել է ծածուկ գործել: Ավելի՛ն՝ ստեղծվել է ոստիկանության ծածուկ ծառայություն և այսուհետ որևէ ծառի կամ քիի հետևից մեր դիմաց կարող է ցատկել ոստիկանը: Ընդ որում, եթե առաջ ոստիկանը նկատվում էր հեռվից, իր հատուկ ծառայողական տարբերանշաններով մեքենայով, ապա հիմա մեզ կարող է կանգնեցնել, օրինակ, վարդագույն Ռենոն և դրանից իջած ոստիկանը՝ ճիշտ Ռենոյի դեմքով, մեզնից պահանջի ներկայացնել փաստաթղթեր: Չէ, ինքը համազգեստով է, բայց եթե ոստիկանների շատ սիրած՝ Գավառ քաղաքի պետական թատրոնի համար խնդիր չէ ոստիկանի համազգեստ գտնելը, ապա հասկանալի է, որ դա խնդիր չի կարող լինել այն հանցավոր խմբերի համար, որոնք ուզում են կանգնեցնել քաղաքացիներին և լրիվ օրինական ճանապարհով տուգանել նրանց:

Ես չգիտեմ, թե կոնկրետ ո՞վ է այս որոշման հեղինակը, բայց նա վստահաբար տեղյակ չէ ճանապարհային ոստիկան-վարորդ փոխհարաբերությունների ամենակարևոր սկզբունքից: Բանն այն է, որ ոստիկանի նպատակը չպետք է լինի քաղաքացու տուգանելը, կամ հնարավորինս շատ քաղաքացու տուգանելը, այլ պետք է լինի այն, որ քաղաքացին խախտում չանի, կամ հնարավորինս քիչ քաղաքացիներ խախտում անեն: Իսկ երբ քաղաքացին իր ճանապարհին տեսնում է ոստիկանի, ոչ թե ասենք վարդագույն Ռենո, ապա ավելի է զգոնանում, ինչը մի քանի անգամ նվազեցնում է խախտում անելու հավանականությունը, որն ի դեպ մի քանի անգամ բարձրացնում է վարդագույն Ռենոն: Եվ ուրեմն՝ քաղաքացին Հայաստանում դառնում է տուգանքի մատերիալ: Սա այն դեպքում, երբ վարչապետ Փաշինյանն էր հայտարարել, թե քաղաքացին Հայաստանում տուգանքի մատերիալ չէ:

Մյուս կողմից, եթե քաղաքացին չգիտի, թե իր հետ մի ճանապարհ կիսող մեքենաներից որի՞ մեջ կարող է ոստիկան լինել, նշանակում է, որ նա միշտ պետք է պահպանի զգոնությունը, ինչն անշուշտ, հրաշալի է: Բայց խնդիրն այն է, որ մարդկանցից փող հավաքելը բավականին զայթակղիչ գործունեություն է, կապ չունի մուրացկան ես, պետություն, թե հանցավոր խմբավորում: Հիմա, եթե մուրացկանն իրեն չի կարող թույլ տալ ոստիկանի համազգեստ ձեռք բերել, նշանակում է պետության այդ մենաշնորհից կարող են օգտվել հանցավոր խմբավորումները, որոնց շատ անդամներ, ի դեպ, արտաքենապես շփոթելի կարող են լինել իրավապահների հետ: Ու եթե հաշվի առնենք, որ ամեն վարորդ չէ, որ իրեն կանգնեցրած ոստիկանից կպահանջի վկայական, և ամեն ոստիկան չէ, որ դա ցույց կտա, ապա Հայաստանի ճանապարհներին փող աշխատելու լայն հնարավորություն են ստանում հանցավոր խմբավորումները:

Չէ, ես ամենևին էլ չեմ պնդում, որ սա եղել է այս որոշումը կայացնողների նպատակը, բայց պնդում եմ, որ Հայաստանում որոշում կայացնողները բարի նպատակ ունենալու խնդիր ունեն: Այդպես էր և այդպես է: Նաև այն, որ ինչ մենք սովորում ենք տարրական դասարաններում՝ հիշում ենք ամբողջ կյանքում: Եվ ուրեմն՝ հրաշալի միտք է ճանապարհային երթևեկության կանոնները դպրոցում սովորեցնելը, ինչպես նաև փոքր տարիքից սովորեցնելը, որ սերը ծածուկ չեն պահում, թե չէ տպավորություն ունեն, որ մեր իշխանությունն իսկապես սիրում է մեզ, պարզապես թաքուն է պահում:

**Հովիկ ԱՅՅԱՆ  
«ԱԶԳ»**

*Գիտություն*

**Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

**Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ,  
հեռ. 56-80-14, 077 31 63 76**

**Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:  
Ստորագրված է տպագրության՝ 25.05.2020 թ.:**

"ГИТУЙОН" ("Hayka") gazeta HAH PA